Դուան մոտ լսվեց ինչ-լոր աղմուկ, Մի մարդ, վորին ուժով ներս ելին հրում, հեկեկում եր և աղիողորմ կանչում:

— Յեղբայրնե՛ր, հարազաննե՛ր, խիղճ ունեք, յեռ մեզու վոր չիմ, աղատեք ինձ, կին, յերեխի տեր եմ, յեղբայրնե՛ր...

Ներս հրվեց խաշած խեցգետնի պես, լացաթաթախի, կարմրած դեմքով մի մարդ, դմիխն յերկայն, չեկ մազերը ցիրցան։ Փակված դռան մոտ մի պահ կանգնեց ճամբամոլոր հորթի նման ապուն կտրած, նայեց այս ու այն կողմ մեծ-մեծ աչքերով, ապա գլուխը ձեռնորդ մէջ աղիողորմ ձայնով հեկեկաց։

— Յեղբայրնե՛ր, մեղք չունեմ, յս էմ աստված, խիղճ մարդ եմ, կին յերեխի տեր, զուր տեղ կրակն եք դցում...

Կլանավորների ուշադրությունը դրավեց նորեկ մարդը։ Զուրովը մոտեցավ նրան, ձեռքն ուսին դրեց և սիրալիր ժպիտով ու աց։

— Հը, մեզ հետ ընկերություն անել չե՞ս ուղում։ Յե՛կ, մեզ մոտ տաք ե, լու կա մաքուր ող. ի՞նչ ես փոքրիկ յերեխի պիհ կանգնել զում ես...

— Ախը՛ր, անմեղ եմ ե՛, խիղճ չկա՞...

— Խե՞ր, խե՞ր, խե՞ր... անմեղ ե, հրեշտակի պես անմեղ, խոռք չկա. իսկ թե մեղանից վո՞րն ե անմեղ, սատանան տանի...

Հայտնի չէ, Զուրովի հեղնական խոսքե՞րը, թե կալանավորների համառ հայացքներն աղբեցին, նորեկ մարդը հանդստացավ և Զուրովի առաջնորդութամբ շարժվեց մի աղատ անկյօւն։ Վերին աստիճանի արգահատելի տեսք ուներ։ Մաղիկ հիվանդությունից դեմքն այնպես եր ծածկվել, ինչպես հնոցի մեջ յերկար ժամանակ մնացած Հայը։ Բացկոնակի փեշերը զուղու կախվել եյին, իսկ մը նացած տեղերը բազմաթիվ կարկատաններով նախշած։ Կոճակները չդիմանալով յերկար տարիների աշխատանքին, կիսապոկ, վիզե ծուռ կախվել եյին։ Ուսերի վրա ներքնաշաղիկի կեղտոտ լաթերին յեյին ցուցադրվում։ Շալվարի ծայրերն այնպես եյին գզգղվել, վոր կարծես մնացել եյին կատաղած շան ատամների տակ։ Փոշեթախի կոշիկները մաշվել եյին։ Աջ վուքի կոշիկի ծայրին մի վուքի յերթիք կար, վորից լույս աշխարհ եր ընկել բթամատը՝ յերկայն ու հաստ յեղունդով։

Զուրովն իսկույն ծանոթացավ և ախակերացավ հետո։ Սզգա նունը Վասիլենկո յեր, Ստավրապոլի կողմերից, արհեստով ներկար։ Աշախտանք ըլինելու պատճառով քաղցել եր և յեկել ընկել Յեկատերինոգար։ Կալանատանը նա իրեն այնպես եր զգում, ինչ պես թոշունը վանդակում։ Տիսուր եր մտածկոտ, չեր ուտում ու միշտ հայացքը դռան կողմն եր։ Յերբեմն-յերբեմն թախծալի ու

ժերը դառնում եյին մեզ, դեմքն ընդունում եր լալկան մարդու արահայտություն, ձայնը դողդողում եր, կցկուուր բառեր հյուսում։

— Ե՛խ, Ե՛խ, յեղբայրներ, խիղճ չկա, խիղճ...

Հաց եյի ուտում, յերբ ինձ վրա հառած տեսա կովի յերկու այնապիշ աչք... Այդ աչքերն այնպես եյին խոշորցել ու մոտիկ տեր, վոր, կարծես, գալիս ընկնում եյին վրաս։ Յես հաց առաջնկեցի Պետրեյին. վերցրեց իսկույն և անթարթ հայացքը միշտ ենձ վրա պահած՝ սկսեց ազահորեն ուտել։

— Զեզ ինչի՞ համար են բռնել, հարցըրի։

Պետրեն ժպտաց, ցույց տալով ձյունախայլ ատամները.

— Ինչի՞, խի՞, խի՞... չե՛մ ասի, չե՛...

Յեկ նրա աչքերն այնպիսի վայլ ստացան, վոր թվում եր, թե մի աչուկի դաղունիք կար նստած այնտեղ։ Ապա բերանը մոտեցրեց ականջիս, հայացքը դեմքիս չեշտակի հառած, մատը բերանին՝ չնջաց։

— Աշ... մարդու չեմ ասի, թող սպանեն...

Յես ել վոչինչ չհարցրի և նա լուս ուտում եր. հացի պատահ ներն անմիջապես կորչում եյին նրա վորկորում։ Յերկար ժամանակ կշտից չեռացավ. կողքիս նստած՝ կապկի պես կրկնում եր ետ շարժումները։ Յերբ յես ժպտում եյի, նրա գեղնախուն, նիշար գեղին ել գծադրվում եր ժպիտ, իսկ յերբ դեմքս խոժոռվում եր, նույնը կատարվում եր նաև նրա դեմքին...

Դուռը բացվեց և Պետրեյին զուրս կանչեցին։ Կովի աչքերն ապա խոչորցան և դառն, մահացունչ հայացքը ծանրացավ ինձ վաս, կրկին հնչեց անունը և Պետրեն խուլ հառաջանքով բարձրացրեց նիշար մարմինը ու ծույլ ծույլ առաջ շարժվեց։ Թե ո՞ւր տառն, ի՞նչ արին, գաղունիք մնաց։

— Յեշեկ այս անդամ նշանն ուղիղ են խիել... ասում եյին կալանավորները, յերբ խոռը եր բացվում նրա մասին։

Յերկու կալանավորի ներս բերին։ Մես կարծահասակ, փոք ու մարմնով, թուխ դեմքով և ածուխի պես աչքերու, մը ու արձրակածակ, վատները ձողի պետքարագի բացկոնով։ Յերկուսն ել թուրքեր եյին։ Ծկրված ու աշունով և վախլուկ քայլերով առաջ յեկան և կանգնելով մի անուն, ծուռ-ծուռ և վախլուկ քայլերով առաջ յեկան և կանգնելով մի անուն, ծուռ-ծուռ ուտուռու նայեցին մեզ։ Նրանց աչքերն արտահայտում ենք, անսակի շփոթ, տիրություն։ Զուրովը իսկույն մոտեցավ նընչեց և բարեկամարտար սկսեց պրուցել. նրա հարցերին պատահ

թանսում եր միայն կարճահասակ թուրքը, վոր կոտրտված ուռ
ռերենով ամեն անդամ ասում եր.

— Не знаем, ей боях, не знаем...

Յերբ ճրագի աղոստ լույսը ճրթճրթաց, կալանավորներն զանու
զան խաղեր սարքեցին: Սկսվեց խանիխուռն զվարթ խոսակցու
թյուն, կատակ ու քրթիջ. չեյիր կարծում թե զանվում ես հետա
խուռական բաժնի նկուղում: Մեկը, քթի տակ մոմուաց ու կրայնա
կան մի ուրախ մեղեդի. շուտով այս ու այն անկյունից յերգողին
ձայնակցեցին և նկուղը թնդաց յերգով ու ծիծաղով:

— Պարոնայք, լուռթյուն... Հնչեց անկյունից մի բամբ ձայն:
Բայց այդ ձայնը խեղեվեց համատարած աղմուկի մեջ:

Միայն յերկու թուրքերը դամվել եյին իրենց տեղը և ծուռ
ծուռ նայում եր մեղ: Իսկ թեքատ չէչենը, դիմարկի տակից ար
ծկային աչքերը հուրհատելով, լուռ ծխում եր:

Չուրովի միջոցով ստացա մի յերկոտղ, վորով վաճառական
հայրենակիցս մի լավ հանդիմանելուց հետո խոստանում եր աղոս
տել ինձ: Այդ տոմսակն ինձ պատճառեց այն թթվությունը, յերբ
հիվանդ մարդն զդում ե բժշկի մոտ: Մի տարեց կալանավոր, վոր
առհասարակ շատ բարյացակամ եր դեպի ինձ, նկատելով տոմսու
կը, հարցրեց.

— Յերեվի լավ լուր եք ստացել, ուրախացել եք:

Յերկու խոսքով հաղորդեցի նրան նամակի բովանդակու
թյունը: Նա մի բոպե շուրջը նայեց կասկածուտ աչքերով և ըմբ
թունքները մոտեցնելով ականջիս՝ ասաց.

— Այդ մարդուց շատ զգույշ կացեք, կասկածելի տիպ
կարող խափել ձեղ...

— Վո՞ր մարդու մասին ե ձեր խոսքը:

— Չուրովի... պարտք համարեցի զդուշացնել ձեղ. ո՛վ դե
տե, յերիտասարդ մարդ եք, կարող եք սխալվել...

— Ախը՛ր, նա այնպես պատվավոր մարդ ե յերեվում դրսից:

— Հը՛մ, աղվեսն ել շատ պատվավոր արարած ե ցույց տալի
իրեն բայց աղվես ե...

Խոսակցս ալեխառն աղվամաղով ծածկված դեմքին և իր
շոր, արտահայտիչ աչքերում նստել եր անկեղծություն: Առաջ
և ի վաղուց նման կասկածները ծագել եյին իմ մեջ և շատ բա
զույշ եյի պահում ինձ:

Յրկու թուրքերը պառկեցին և կծկվեցին իրար. կարճահասակ
ռենանգիստ շարունակ շուռ ու մօւռ եր դալիս այս կողքից այն

փնթիփնթում քթի տակ, իսկ բարձրահասկը բերանը լայն-լայն բռ
նալով հորանջում եր:

Խաղացողները ցրվել ու պառկել եյին այս ու այն կողմ: Տարեց
կալանավորը յերկնցել կողքիս ծխում եր և աչքերը սուզել առած
ասղի. մառախուղի մեջ: Ծխելուց հետո դարձավ դեսկի ինձ և կա
մացուկ ասաց.

— Քնե՞նք, յեղբայր, ինչ կլինի—լինի, շատ մտածելուց բան
չ դուրս դա, լավին են ե քնել և ես դարդի աշխարհը մոռանալ...

Յել թեվերը զնելով գլխատակին աչքերը փակեց:
Քունս սակայն չեր տանում. վորքան աշխատեցի աչքերս փակել,
յըել մտքերս, չեղալ... Ու ժամերը սահում եյին հավիտենական
քայլերով:

Յերբ նայեցի հարեվանիս, նրա աչքերն ել բաց եյին:

— Ե՛ս, քունս չի տանում, չե՛. իմ փոքրիկ նատաշան միտս
մեկավ, մի տեսնեք ի՞նչ աղջիկ ունեմ, ե՛... Ե՛ս, հիմա վոր
քան տիրած կլինի իմ նատաշան...

Նրա աչքերում խտացավ տրտմության և վշտի ամսով:

Առաստաղից մի պապուկ ընկավ յերեսիս, թաթերն արձակեց և
փորձեց վազել, բայց գարշանքով խտեցի նրան ու զցեցի հեռու,
հեռու. ինձ պատեց անախորժ զգայություն և ավելի ևս խանգարեց
զունս:

Ե՛ս, ե՛ս, նատաշա... Յեթե իմանայիք ի՞նչ անուշ աղջիկ
տաներկու դարուն հազիւլ և համրել իմ նատաշան...

Իսկ իմ աչքերին պատկերվեց Զինան...

«Զինան... Արդյոք Զինային բան չի պատահել...»

XI

Իրիկնաղեմին ինձ կանչեցին գուրս: Մինչև նկուղի դուռը
հետո տարա մի շարք միղացած աչքեր: Առանձնաղես հուզիչ եք
արեց կալանավորի սրտադին մնաս բարովիր:

Հրացանակիր պահակն ինձ առաջնորդեց վերև: Քայլում եյի
շնչածի պես: Ինձ թվում եր, թե կալիտանի մոտն են տանում,
բայց մեծ յեղավ զարանքս, յերբ առատ լուսավորված սենյակում,
քրասեղանի յետեվ, թիկնաթուխն մեխլած տեսա զնդապետ Շեվ-
չոնկոյի մսակույտը: Նրա հրամանով գուրս գնաց ինձ ուղեկցող
զահակը:

— Հը՛մ, յն ասսաք սկարմ զավ ապաշ արեցիք, շա, բա՛,
ուղեկցու...

Դրասեղանի յետելից ճամբատեց նրա բաժքը, հեղնող քրքիթը

— Զզզուշացրի՞ ձեզ, վոր խելոք մնաք, ձեռք վերցնեք այս փառցային բողից : Զե՞ք իմանում, վոր նա կասկածելի կին է, հայրենիքի դավանան, Ռուսաստանի թշնամի, չե՞ք իմանում... Ել կիչ չկա՞ր. կանանցից շա՞տ ես աշխարքում, հենց էն բո՞զն և մտել տչքդ...

Մատը թափ տվեց սպառնագին և աչքերը խստությամբ վոլորեց վրաս : Մինչ յես հաղիվ եյի հուզմունքս զսպում, պրկելով ջղայնությունից դողացող լրթունքներս :

— Ձեր բարեկամ Ավագովը յերկու անդամ խնդրեց ինձ բարեխոս մել ձեզ համար, — շարունակեց գնդապետը թուլացնելով զեմքի դաշտան գծերը, — բայց հաղիվ կարողացա կապիտանին համոզել, վո՞ղուք այդ աղջկա վոչ թե գաղափարակիցն եք յեղել, այլ... սատանան տանի, հաղիվ կարողացա համոզել : Հիմա պետք ե շա՞տ ըլլուշ մնաք, թե չե, դիտեք հա՞... Յեթե ուրիշ անդամ ել վոտքը այս շեմքից ներս դնեք, ել հավետյան դուրս դալ չի լինի... Հը՞մ բնչ եք մտածում :

Մի վայրկյան ինձ գերեց մի ահավոր միտք. ցատկել գեղի այդ գղվելի ճարպակույտը, բռնել զղից և ուժգնորեն սեղմել... Բայց յես գերազույն ճիգով զսպեցի ինձ և հայտնեցի, վոր համաձայն եմ վասիլի Պետրովիչի ասածներին...

— Տեսնե՞նք, յերիտասարդ պարոն, տեսնե՞նք—սառնությամբ մոմաց զնդապետը և զանդահարեց :

Ներս մտնող պահակին մի յերկտող հանձնելով հրամայեց ուղեկցել ինձ քննիչի մոտ : Կապիտանը կարդաց զբությունը, մի ծակող հայտաց բներեց աչքերիս, հոնքերն հաղաքելով մի պահ մը ատածեց, ապա ինչ-վոր արձանագրեց թղթի վրա ու, կասկածով լինչքերը թարթելով վրաս, ասաց .

— Աղա՛տ եք, կարող եք իրերը վերցնել և դնալ :

Բայց յես վոչ մի իր չունեյի վերցնելու : Պահակն ուղեկցեց ինձ մինչև դուռը և յես դուրս յեկա այդ մարդակեր ընսությունից՝ ինչպես վանդակից ճողովրած թռչունը :

Ամբողջ կրծքով չնչեցի դրսի մաքուր ողը, զանդադորեն քայլով մայթի յերկայնքն ի վար : Մինչ ականջումս զեռ ճարճատում եյին զնդապետ Շեշենկոյի սպառնական խոսքերը .

«Տեսնե՞նք յերիտասարդ պարոն, տեսնե՞նք...»

Մութը իր թերի տակն եր առել փողոցը, աները, սոսպավառ յերկինքը : Յերբեմն-յերբեմն լուսությունը խզող կառքերի գորշունը

և բասամուսներից դուրս ցատկող լույսերն ապացուց եյին, վոր մարդիկ գեռ ապրում են իրենց սովորական կյանքով :

Վորտեղից, չդիտեմ, մութի մեջ առաջս ցցվեց մի մարդ և հավասարվեց քայլերիս :

— Յերիտասարդ պարոն չնորհավորում եմ, աղատվեցիք :

Զուրովն եր իր բաս ձայնով և թավ մորուքով : Զարմանքն ու շփոթությունը տիրեցին ինձ անակնկալ կերպով նրան տեսնելով կողքիս և յես տհաճությամբ հեռացը դեմքս, վորովհետեւ նրանից ալկոհոլի և ծխի ծանր հոտ եր փչում :

— Զգնա՞նք և մի լավ չխմե՞նք ձեր կենացը... .

Մերժեցի առարկելով, վոր հողնած եմ և պետք ե շտապ զնամ տուն հանդստանալու : Նրա աչքերում նշանակեցի խայթող դիվային փայլ... Դյուր չեկավ նրան մերժումս :

— Ե՛խ, ե՛խ, յերիտասարդ պարոն, չդիտեք չնորհակալ լինել նրանց, ովքեր ձեզ համար աշխատանք չեն խնայել :

Յեթե խոսքը վերաբերում է բանտում ինձ ուտելիք բերելուն կամ հայրենակցիս տոմսակ առաքելուն, յես ամեն անդամ ավելի եյի վճարում ասելով .

— Ես ել քեզ նա չայ...

Յեվ նա չայն, առանց ընդդիմության հանդիպելու, կորչում եր նրա գրպանների խորքը :

Այժմ ի՞նչ և ուղում ինձնից :

— Ուրիշ բանի համար պիտի չնորհակալ լինեք, յերիտասարդ պարոն, — նրա ձայնը ցածրացավ և դարձավ խորհրդավոր հնչյուն, այս բանի, վոր յես կապիտանին համոզեցի, վոր դուք անմեղ մարդ եք...

Կանզնեցի մի պահ և մութի մեջ նայեցի նրա մութ աչքերին :

— Զարմացա՞ք: Ե՛հ, ինչ արած, աղքատությունից, յեղայր չժվար և ապրել, մեծ ընտանիք ունեմ, փող և պետք...

— Ուրիմն դուք կապիտանին հաղորդում եյինք, ինչ լուսում եյիք մեղանից, — Հարցը յես վրդովված :

— Կարող եյի թունք բաներ հայտնել, վոր դուք բոլցելի եք, մասնակից եք ընդհատակայա աշխատանքներին և ուրիշ շատ բաներ...

— Յեվ նա կհավատա՞ր :

— Բարս ի՞նչպես. յեթե չհավատան, ել ինչի՞ կհանձնեն ինձ արդյունքի պատասխանանու աղարտականություններ :

Յերանիցը դուրս ցայտեց արագի գոլորշու մի հեղեղ: Յես շուն-

ՀԵՐ պահեցի այդ անտխորժ հեղեղը չկանելու համար և վորոշցի
շուտ աղասվել նրանից :

— Հիմա ի՞նչ եք կամենում, յես հոգնած եմ, շտապում եմ
տռւն :

— Վոչի՞նչ, միայն ուզում եյի հիշեցնել ձեզ յերախտաղարտ
մնել ինձ, վոր ձեզ փորձանքի չմատնեցի. յերախտաղարտ
հասկանում եք, կին, յերեխի տեր եմ...

Առանց ծպառւնի նրան տվի վերջին կողեկներս և զայրույթով
լցված՝ արագորեն առաջ անցա: Յերբ յետ նայեցի, Զուբովը մոտե-
ցել եր լույսին և հաշվում եր իմ տված փողերը...

Ինչ-վոր միտք հանկարծ չարչարեց ուղեղս. յետ դարձա և
շտապ քայլերով մոտեցա նրան :

Դրամը բուան մեջ, վորսը պինդ բոնած դազանի խոշար աչքերով
նայեց ինձ :

— Իսկ Միսա՞յելովը, նրան ի՞նչ արին...

— Ուղարկեցին վերև, խե՛, խե՛...ուղարկեցին սատանաների
մոտ...

Սոսկումով ու ցասաւմով բոնված մարդու կատաղությամբ վա-
զեցի առաջ :

ՅԵՐԱԲՐԴ ՄԱՍ

I

Սենյակիս ու իր տիրոջ վիճակը լավ եյին ներդաշնակում.
ամայությունն եր թաղավորում այնաեղ : Խուզարկության ժամա-
նակ քբալած անկողինս ու թափթփալած իրերս մնացել եյին նույն
վիճակում : Մաքրեցի հաղուստիս վոշին, վառեցի լամպը, կար-
գավորեցի իրերը և իր բույնը վերադարձող թռչունի բերկու-
թյամբ՝ նստեցի մահճակալիս : Մի շարաթ շարունակ կալանատան
չոր հատակին վարժված վոսկորներս մի պահ իրենց հանգիստ
կուցին փափուկ անկողինի վրա : Իսկ հայելու մեջ յերեաց գու-
նատ, մաղառատ գեմքով մի մարդ, վորի աշքերում հոգնածու-
թյուն կար և անքնությունից գոյացած գեղնավուն գծեր :

Ներս ընկավ ուրախ վոստյունով ու զրնդուն կանչով Նյուռան
և փափուկ ձեռներով վողջազուրեց ինձ : Նոր ավյուն ու յեռանդ
խաղաց յերակներիս մեջ ու միանդամից փարատվեց հոգնածու-
թյուն :

— Իսկ յետ կարծում եյի, թե Նյուռան արդեն մոռացել ե ինձ
և զուցե չի յել մտահոգվում կենդանի՞ յեմ, թե մեռած... ասացի
յես շոյելով նրա վոսկեփայլ մալերը :

— Ա՛խ, այդ ինչե՞ր ես խոսում, — կանչեց Նյուռան վիրապոր-
կած, — ամեն որ աչքս սենյակիդ դռան՝ անհամբեր սպասում եյի,
թե յե՛րը վերջապես պիտի աղատվես ու վերադառնաս :

Համակվել եյի նրա անկեղծ ցնծությամբ, սիրտս բավել քնքուշ
հույզերով, ամբելու կենարար չնչով : Ինձնից ավելի ուրախ եր,
վոր վողջ ու առողջ եմ, և նրա անսահման ուրախությունը քաջա-
մբում եր ինձ, ինքնասիրությունս չոյում :

Բավական ճռվողելուց հետո, Նյուռան վեր յելավ և սկսեց
տանտիկնություն անել, սենյակս կարգի բերել : Կանացի ձեռքը
ջույց տվեց իր անվիճելի գերազանցությունն այդ դործում, և շատ
չանցած՝ ցնակարանս աղատվեց իր խառնարինթոր, արգահատնել-
տեսքից : Թեյեցինք միասին և յերկա՞ր, յերկա՞ր զբուցեցինք:
Նյուռան հայտնեց, թե ինչպես մի պառակ, կապույտ ակնոցներով
չին հետեւ ըել ե ինձ և շատ ե տիրու, ներք իմացնէ և ձերակալ-
վելուս մասին :

«Զինայի հորաքույրը կլինի՝ վառվառա Նիկոլաևնան... բայց վառվառա Նիկոլաևնան ակնոցներ չի գործածում...» մտածում էիր տարակուսած :

Նյուուայի գնալուց հետո, անմիջապես պառկեցի, այնպես ելի ուղում մի լավ քնել...

Արեւ բարձրացել, նստել եր զենիթին, յերբ դարձնեցի: Հազիվ ելի շորերս հազել, յերբ ներս մտավ կապույտ ակնոցալոր պառավը... Ներս մտավ և ուրախության արցունքներն աչքերին փաթաթվեց ինձ: Վորքան մեծ յեղավ զարմանքս ու հրճվանքս, յերբ պառավի ուսերից շախ ընկալ, ակնոցներն հեռան աչքերից և առջևս պատկերվեց Զինայի գունատ գեմքը:

— Վերջապես քեզ գտնում եմ կենդանի՝ մութ գնդանից աղատիած,—ասաց Զինան հուզված ձայնով:

— Փոխնիտիս յեղավ, առաջ դու ապաշխարեցիր այնտեղ, հետո յես,—պատասխանեցի ժպտալով:

— Հերթն իմն և այժմս, պետք եւ պատրաստ լինել... ավելացրեց Զինան կատակով և անհանդստությամբ ունկնդրեց մի շարաթյա մարտիրոսագրությանս համառոտ պատմությունը:

— Յեվ այդ բոլորը իմ պատճառով, հա՞... ա՞խ, իմ խեղճ, իմ պնիվ Արամ... բացականչեց իսկոտ դդացված և կրկին փաթաթվեց ինձ:

— Այդ բոլորը այն գաղափարի համար, վորին յերկրապատճ ևս դու... պատասխանեցի հանգիստ, իմ մեջ դդալով անսովոր ուժու խանդավառություն:

— Պոլետարիատը չի մոռանա այն ամենը, ինչ կատարվում է հօգուտ նրա վիթխարի հերոսամարտի, թեկուզ ամենաչիշն ծառայությունը,—ասաց Զինան վորեվորությամբ և շարունակեց յես կարծում եմ, վոր դու այժմ արժանի յես կուսակցության անդամ լինելու, մենք քեզ կմկրտենք կոմմունիստ...

Նստեցինք: Աչքերը նրա լուսափայլ, անամազ յերկնքի պես պարծառ, ամփոփվել եյին վրաս, քնքանքով նայում ինձ, կարծես թուփանցում եյին հոգուս խորքերը...

— Արդյոք դիտե՞ս, լնկեր Արամ, վոր մերոնք գալիս են,—իսու նեց Զինան փոքր լուսությունից հետո,—սպիտակներն արդեն լքել են Խարկովը, իսկ նրանց գերազույն շտաբը պատրաստվում է Տավանրոդից վոխալըլի Յեկատերինովար:

— Ի՞նչ ես ասում, այսքան կարճ ժամանակաշրջանում, այս գամ արա՞գ...

— Բա՛ռ, ամենակարեռը—գյուղացին ալիս չի ցանկանում կովել, Դենիկինի ատամները համբեց արդեն: Գյուղացին լքում է Դիրքերը, թիկունք ցույց տալիս կամ հակառակորդի կողմն անցնում: Պարզ ե, ուրեմն, մերոնք շուտով այստեղ կլինեն:

Նրա խոսքը, վստահ և աղջու, կասկած չեր թողնում լսողին: Դեմքը դառնում եր հավաքառ, յերբ «մերոնց դարձերի և հաղթանակների մասին եր պատմում: Թվում ե, հազար անդամ հազար բազուկ, բյուր անդամ բյուր կամք միացել եյին եներգիա տալու նրա հուրհրատող աչքերին...

— Բայց մինչ այդ, մենք պետք եւ արթուն հսկենք, խլուրդի սրբ գաղտագողի փորմիրենք շարունակ տիրող սև կարգերի հիմքերը, —յեղափակակց իր խոսքը Զինան:

Փողոցում ինչ վոր շարժում կար, զորք եր անցնում ընդուռ քայլելով, լսկում եյին ձիերի սմբակների խուլ դոփյունները և դրո դուացող սայլերի խառնաշփոթ աղմուկը: Սպասում եյինք ամենք բոպե, վոր ահա ներս կխուժեն, մեղ միասին կրունեն. ու այլես հավիտենական հրաժեշտ արև աշխարհին:

Զինան վեր յելավ, ծածկեց կապույտ ակնոցները, գլխաչորն եջեցրեց մինչև քիթը, շալը ոչեց ուսերին:

— Այժմ սատանան անդամ չի կարող ճանաչել ինձ,—ասաց նա ու իր հասցեն տալով խնդրեց այցելել իրեն: —Միայն զգուշ, հա՞, թե չե ելի կընկնենք քո «մտերիմ» ճարպակրույտի ճանկը...

Զինայի մեկնելուց հետո զնացի վաճառական հայրենակցին ձեռքհակալություն հայտնելու, վոր միջնորդել եր իմ մասին գրադաւետի մոտ: Քաղաքականության և քաղաքավարության մի անհինորժ թելաղբանք: Նիկիտ Սերգեյիչը ձեռները մեջքին, զանձարկը մոտ կանգնած, տուտուրին եր հսկում: Ինձ տեսնելով ժողիտ յերեաց դեմքին և ասաց:

—Եղ ի՞նչ փորձանք եր յեկել գլխիգ, յեղբայր, գնդասկետին շատ ինդրեցի, վոր քեզ համար աշխատի...

Սակայն գեռ պատասխանս չստացած, ուշարբությունը կենարունեցրեց վաճառուհիներից մեկի վրա, վոր հինգ Փունտ տնուշենեն եր ծախում: Արագորեն մոտեցավ նրան և խառավաթյամբ ասաց.

— Պա՛շա, քեզ չասի՞ս, վոր Փունտին տասր կողեկ պետք է Վրան գալ, ամենորյա զները մե՞կ են, մի տեսնք, թե շաքարն ու ֆեղը ինչ դին ունեն, ուղում եք վնասվե՞մ...

Ու այսպես թունդ վոլորեց աչքերը, վոր աղջկա գեմքը շառաւույն փայլ ստացավ ամսթից:

— Անիծածներին հազար անգամ պատվիրում եմ, դլխները ՆՇտանում. ափսո՞ն նրանց կերած հացը, — մինթինթաց Նիկիտ Սերդիչը, մի քանի բոպե լոեց, ապա հիշելով ինձ ասաց.

— Հա՛, ուղում եյի հարցնել, թե եղ ի՞նչ փորձ... Նա՛դիս, — Համերած դարձավ մյուս վաճառուհուն, — պարոն սպան չոկոլադ և ուղում, ուշադրությունը վորտե՞ղ ե...

Նարդիսն, վոր առանց այն ել դրադիված եր մի ուրիշ հաճախորդով, տիրոջ սաստ ձայնի վրա, մեքենայի արագությամբ վերջացրեց առաջին գործը և անցավ յերկրորդին:

— Հա՛, են եյի հարցնում... Ո՛, բարե ձեղ, ձերդ պայծառափայլություն, համեցեք, աղաչում եմ...

Աշագովի փոքրիկ գլուխը խոնարհաբար իջավ, դեմքին նկար վեց քսու, աղերսող ժակիտ: Ներս մտնողը միջահասակ, լայն ուժ սերով, պարսպանման թիկունքով, սպիտակ թեխերը սրածայր վրածրած մի գեներալ, իր կեռ թուրը չխչխկացնելով յեկել եր առետուրի: Ամբողջ ժամանակ, քանի գեռ գեներալը խանությունն եր, Նիկիտ Սերդեյիչը դեմքի կեղծ ժակիտն անփոփոխ, ուշադրությունը հսկում եր, միշտ պատրաստ ծառայելու: Իսկ յերբ հաստատարմին գեներալը հեռացավ, դլուխը մոտեցնելով ինձ—իրը թեշա՞տ յերեւի բան և հայտնում—շնչաց.

— Գիտե՞ս, զա քաղաքի կոմենդանտն եր, գեն. մայոր Լիսովսկին, դիտե՞ս...

Յեվ շատ խորհրդավոր ու վեհաշուք արտահայտություն ընդունեց Նիկիտ Սերդեյիչի դեմքը:

Այսուհետեւ մոռացավ թե ինձ, և թե տված հարցը. նորանոր հաճախորդներ ներս մտան, և նա զբաղվեց նրանցով: Հետո հանկարծ նայելով ինձ, կրկին հիշեց, վոր այստեղ եմ, մոտ յեկավ և սիրալիր հարցրեց.

— Յեղբա՛յր, չպատմեցիր վերջապես, թե եղ ի՞նչ փորձանք եր յեկել դիմիդ:

Շատ կարճ նկարադրեցի գլխիս յեկած «թյուրիմացություն» փորցանքը. կեսը ուշադիր, կեսն ել ուրիշների հետ խոսելով ունկնդրեց, ապա դեմքը լրջացավ, աչքերը փայլմացին ու դաշտան կիսախուփ:

— Սակայն իմացի՛ր, վոր թանգ նստնց ինձ քաղ աղառելք՝ զնդառեր, Ծնէնկու և իջ տնեցէք քո պատ պաշական քա-

նակությամբ անուշեղեն են տարել առանց վճարի, այդ ամենը դրել եմ քո հաշմին...

Աւ կլոր մի դումար արտահայտող հաշիվ ներկայացրեց ինձ: Երթունքներս կծոտելով, ստիպված յեղա ընդունել և ժամանակ ինդրել այդ դումարը մաս առ մաս վճարելու, համաձայնվեց:

— Հայրենակիցս ես, — ասաց նա, — խաթրդ չեմ կոտրի:

Յերբ այցելությունս վերջացած համարելով շարժվեցի դեպի դուռը, փոխանակ պատասխանելու հրաժեշտիս վողջույնին, յետիցս բացականչեց.

— Շուտ-շուտ յեկ, առետուր արտ կատարիր հայրենակցական պարտքդ...

II

Այն փոքրիկ մի հարկանի տունը, վորի հասցեն ավելից Զինան, դունվում եր քաղաքի մի մոռացված վայրում, Մարինսկայա նրբանցքում: Դուռը բացողը մոտ քանի հինգ տարեկան բարձրահասակ, միք մարմնով տիկին եր, վոր սիրալիր ժոխովով ինձ ներս ասկ, լիք մարմնով տիկին եր, վոր սիրալիր ժոխովով սենյակ: Զինան հրավիրեց: Բավկական կոկիկ սարքված լուսավոր սենյակ: Զինան հոգմոցում լրադիր եր կարդում: Զերմորեն ընդունեց ինձ նստել բազմոցում լրադիր եր կարդում: Յերմորեն ընդունեց ինձ նստել բանոթացրեց տանտիրուհու հետ, վորին անշանուժ յեկին Յեվկենիա Պետրովնա Ֆոկինա: Նոտեցինք: Զինան մեր ուշադրություն կական: Նոտեցինք: Զինան մեր ուշադրություն կական: Հրավիրեց լրադրի առաջին յերեսին տպված ուազմական հայտարարության վրա և կարդաց հետերալ նախադասությունը. «Մետաղմադիտական նահանջը տակինին շարունակվում է, բայց ընոնց ուազմադիտական նահանջը տակինին շարունակվում է, բայց մեր քաջարի բանակը պատրաստվում է վերջին, վճռական ճակամագիր բանակը, և շուտով կունենանք, թե ինչպես կարմիր հրեշը ջարտարարեց: Կուփուրը ու գլխապատառ՝ կսկսի նահանջել»...

— Լսո՞ւմ եք, ինչպիսի հրաշալի հեքյաթներ են պատմում «մերոնց» մասին, Հա՛, Հա՛... ասաց Զինան հեղնական ժպիտով և շարունակեց կարդալ մի քանի լուրեր ու դրվագներ ուազմանաւակատի մասին, ապա բարձրաձայն հայտարարեց.

— Դեներալ Վրանգելը նշանակված է կամավորական դորքերի և ըի հրմանատար... Ոհո՛, լեռը մուկ ծնեց, ուղում են բարոնների և հշկանների մեծաղջորդ անուններով փրկել ստեղծված դրությունները. վողորմելիներ, չեն իմանում, վոր փոթորկված մասսաների զեմ վոչ մի իշխան կամ բարոն չի դիմանա...

Յեղքենիա Պետրովնան լուր լսում եր. նրա թարմ ու սպիտով զեմքն այնքան ներդաշնակ գծերեվ եր կերպված, վոր կարծեա-

առաջանդավոր նկարչի վրձինից եթ անցել, իսկ աշքերի մեջ նստել եր մի մտերիմ, միամիտ ցուք:

Սենյակն այնքան հարուստ չէր կահկարասիքով: Անկյունից պահարանն եր պահակի պես հսկում. սեղանի վրա ուշադրության դարնող նուրբ գործված սփռոցներ կային, իսկ պատին մի մեծ յուղաներկ նկար կար, վոր ներկայացնում եր Ելբրուսի ձյունապատ գագաթը:

— Դե՛մ, հիմա, ընկեր Արամ, հերթը ձերն եւ, պատմեցիք թե ինչպես ապաշխարեցիք կեղտուսության և լվերի աշխարհում, — ասաց Զինան մի կողմ գյելով լրադիրը:

Պատմեցի մի քանի եպիգովներ կալանատան կյանքից: Նկարադրեցի Զուրովի տիպը, թե ինչպես վարպետորեն լրտեսում եր կալանավորներին, ներկարար Վասիլենկոյի աղեկտուր լացը, վախվորված, արգահատելի անսքը. յերբ նկարազեցի կալանավորների տուրուղմանը, Զինան ու Յելգենիա Պետրովնան կուշտ ծիծաղեցին:

— Հետաքրքիր եւ, ո՞վ հարցաքննեց քեզ, քո բարեկամ դնդապե՞տը, թե ուրիշ մարդ:

— Ինձ քննեց մի կապիտան...

— Կապիտան Լևանդովսկին, — խոսքս կտրեց Զինան աչքերը հետաքրքրությամբ լայնազիշ, — մի յերիտասարդ, համակրելի շեմքով, բայց խիստ մարդ:

— Այո՛, հենց նա յեր:

— Լավ եմ ճանաչում, ինձ հարցաքննողն ել նա յեր: Ավելի արյունաբրու մարդ սպիտակները չեյլն կարող ճարել. նրա մոտ արդարն ու մեղավորը մեկ են՝ բավական և մի մազաշուի կտսկած, ել աղտոտմ չկա ձեռքիցը:

Մի քնի բովեւ անց Զինան կրկն հարցրեց.

— Արդյոք այդ բոլորը ձեր «բարեկամ» դնդապետի սարքածը չե՞ր...

— Անպայման, — պատասխանեցի յես վստահ շեշտով, — այլպես հետախուզական բաժնում ինչպես պիտի իմնային, թե մենք իրարու ճանաչում ենք: Այդ փորձված աղվեսի գործը կլինի, դրամի հոտ ե առել յերկի...

Ճաշի ժամն եր սպառնում, յերբ վեր կացա մեկնելու, բայց նրանք համառորեն խնդրեցին միասին ճաշել: Համաձայնվեցի: Յելգենիա Պետրովնան սկսեց ճաշի պատճառությամբ զբաղվել, իսկ յետ ու Զինան զբուշում ելինք զանազան հարցերի շուրջը: Հար-

Յի նրա հորքով մասին: Պարզվեց, վոր մի քանի անգամ նրանց բնակարանում խուզարկություն և յեղել և վարվառա նիկոլաևնուն հավասարցրել ե, վոր Զինան մեկնել և Ռոստով և ապրում է այս-

տեղ:

— Յեկ նրանք հավատացե՞լ են:

— Յերեկի, վորովհետեւ ել չեն ձարձրացնում հորաքրոջը. ա-

սենք, յետ շատ սակալ եմ դուրս գալիս, այնպես վորի իմ հետքը

կարող են կորցրած լինել:

Զինան հայտնեց նաև, վոր գրաշար իւլյուշկինը համախ հան-

չեղում և նրա միջոցովն և իմանում կուսակցության կարգա-

կրությունները: Այս անդամ գաղտնիքներ հաղորդելու մեջ Զինան

աւագնեցնեն եր դառնել, բանարկությունն մեղ ափելի յեց

մոտեցրել իրաբ:

Մեր ձաւոց շատ համեստ եր, ուսուական բորչ և տապակած կենաչնությունի մրս: Ուսում ելինք ախորդակալով և ղրուցում: Կանափինձորով մրս: Ուսում ելինք ախորդակալու խոսում եր Յելգենիա Պետրովնան: Վարդվեց, վոր նա սովորել և կարկովի համայստարանի բժշկական Փակությունում, ամուսնացել և մի ուսանողի հետ, վորով ղինվու- ֆակությունում, յենթարկվելով սպանվել և համաշխարհային պատմա- ռադյության յենթարկվելով սպանվել և Յելգենի ախորդա- կալովի ժամանակ, իսկ ինքը գեռ ուսումը չափրած յեկել և Յել- գենի նողաբար և քաղաքացիական կոփեների պատճառով մնացել և այս- տերինողաբար և քաղաքացիական կոփեների պատճառով մնացել և այս- տեղ: Զինայի հետ մանկության ընկերներ են յեղել, միասին սո- տեղ: Վորել գիմնազիայում:

— Զինան գպրուցում, — շաբանակ իր խոսքը Յելգենիա

Պետրովնան, — իստու անհանդարտ, լիճառեր աղջիկ եր, զուրս

արդից գպրոցից զեռ սուսումը չափրածած, ծառայության մտավ

զործարանում վորպես գրադրուհի, այնտեղ նա մասնակցում եր

սանվորական գաղտնի կազմակերպություններին և շատ եր սիրում

կանվորական գաղտնի կազմակերպություն: Մինչ յետ ավելի գե-

կարգալ մարքսիստական գրականություն: Մինչ յետ ավելի գե-

կարգի սուստական գրականությամբ ելի հետաքրքրվում, ինձ գրա-

կարգի սուստական գրականությունը ելի հետաքրքրվում, մանավանդ չյուղուն, սիրում ելի ընկ-

վում ելին ուսմանտիկները, մանավանդ չյուղուն գեղեցիկ ցնորժներով: Զի-

նել յերևակայության գերկը և տարվել գեղեցիկ ցնորժներով:

Զինան վիճում եր հետո, վոր ձեռք վերցնեմ ֆանտազիայից և կար-

շամ այնպիսի գրքեր, վորոնք մեղ կատում են իրական, զործնա-

կան կյանքին, սակայն յետ պնդում ելի, վոր մարդս վարքան կատ-

կան կյանքին, այնքան ավելի ու ավելի կմիրճի հոգ-

վի զործնական կյանքին, այնքան ավելի ու ավելի կմիրճի հոգ-

վի զործնական կմիրճի միջ, իսկ աշխարհն այնքան լիքն և հոգսերով ու-

կարելով...

Տիկնոջ իւսուելու տառեն, ինձ թվում եր, թե մեկը արծաթի բարակ թերթի վրա նվազում ե, այնքան դժուրալի ու մեղմ եր նրա ժայնը: Զգիտես ինչու, իմ հայացքը ժամանակ առ ժամանակ զը նում բենովում եր նրա դեմքին, յերևի ուզում եյի կըկին ու կըր կին հանալ նրա նուրբ դիմադերով: Այդպիսի բովեներին ինձ վրա եյին ամփոփում Զինայի մտադրադ աչքերը...

Ճաշից հետո մենք հանգստանում եյինք, Զինան ու Յելդենիս Պետրովնան թախտի վրա, իսկ յես բաղմոցի: Ժամանակը համույքով եր սահում:

Սրեւ հրճվագին զրոսնեց տների կտուրներին, իր շողերով արեց նրանց թիթեղները և գնաց թեք ընկավ հեռավոր հորիզոնում: Նրա վերջին ծիրաննելառ հրթիռներն երին ցոլցլում միտին:

Մեկնելուս ժամանակ Զինան վողջունեց ինձ ու մնաց սենյակում, իսկ տիկինն ուղեկցեց մինչև փողոցի դռւոք:

Հաճախ այցելեք մեզ, շատ ուրախ կլինենք...

Տիկնոջ այս վերջին խոսքերը և միամիտ, անուշիկ ժպիտը յի՞ հաճույքով տարա հետո:

III

Մի քանի որ անց փողոցում հանդիպեցի Յելդենիա Պետրովնային, վոր անցում եր մի ծանոթ յերիտասարդի հետ: Նկատելով ինձ, Յելդենիա Պետրովնան մոտեցավ, ներկայացրեց յերիտասարդին, հայտնելով, վոր Զինայի մոտիկ ընկերներիցն ե:

— Իսկ ընկեր Սրամն այս անձնավորությունն ե, վորի մասին տոսկութ խոսում եյինք; — յեղափակեց Յելդենիա Պետրովնան:

Յերիտասարդը մտերիմ հայացքով մի վայրկյան ինձ նայեց. նրան անվանում եյին Եմիլ Դավիդովիչ Գոլման. միջահասակ եր, խարտյաշ մազերով, սուր քթով, կենդանի, շարժուն աչքերով, հաղին ուսանողական մաշված շորեր:

— Զինան մնաց տանը, իսկ յես ու Եմիլ Դավիդովիչը վորոշեցինք քիչ զբոսնել. արդյոք չեյի՞ք ցանկանա մասնակցել մեր զրոսներին:

Հաճույքով ընդունեցի Յելդենիա Պետրովնայի առաջարկը:

Ինչ վոր իրարանցում կար փողոցում. զորք եր անցնում հանդիսավոր յերգերով, դրոշակներ եյին ծածանվում: Հրապարակում ռազմական ըուրեր հաղորդող տախտակի մոտ խուռն բաղմություն իար հավաքված: Մենք ել մոտեցանք ու կարգացինք խոշոր տառերով գրված տեղեկությունը.

«Մեր փառաղանձ զորքերի ուժեղ ճնշման տակ հակառակորդը խուճապով յետ նահանջեց, կովի դաշտում թողնելով մեծ քանակությամբ գերի և ուղմական ավար»:

Յերբ բավականին հեռացանք, Եմիլ Դավիդովիչը հեղնական տոնով ասաց:

— Յերենելի բան ե յեղել, ուրախացել են մի ինչ վոր փոքրիկ, աննշան հաղթության համար, մինչդեռ կարմիրներն արդեն մոտենում են Ռուսություն...

— Ի՞նչ դիտեք, վոր աննշան հաղթություն ե, կորական վախճանի կարելի ասել, — պատասխանեց Յելդենիա Պետրովնան:

— Կտեսնենք, շուտով կտեսնենք, քիչ ել համբերեք...

Գոլմանի դեղնավուն դեմքին պատկերվեց մի անդիջող, համառ կամք... Անմիջապես զգացի, վոր նա և Զինան միևնույն հընոցում յեփված մարդիկ են, ինչ վոր ամելի վառեց հետաքրքրությունուն նրա հանդես:

Ահա փոքրիկ քաղաքի ծայրամասը, ընդարձակ ծառուղին, տանկապատված այդիները և փոքրիկ, գեղատեսիլ պարկը: Լույսի, կանաչի և ծաղիկների բաղմաթիվ զույներ շոյեցին մեր տեսողությունը: Հեռվից նկատելով զինվորի շորեր հաղած ինչ վոր մարդու, Գոլմանը մոտեցավ նրան և նրանք միասին ուղղվեցին պարկի մեջ: Յես ու Յելդենիան նստեցինք նստարանին ու մի պահ մի անկյուն: Յես ու Յելդենիան նստեցինք նստարանին ու մի պահ մերկուքս ել նայեցինք տերեների կանանչից՝ պայծառ հայացքով մեղ դիտեղ յերկնքին: Ապա, չգիտես ինչու, յերկուքս ել միաժամանակ աշքներս հեռացնելով յերկնքից՝ նայեցինք իրաք: Մի անթարթ տեսեց միայն մեր հայացքների հանդիպումը, Յելդենիա կնթարթ տեսեց մասն մեր հայացքների հանդիպումը, Պետրովնայի լուսաթաթախ աչքերը անուրջի պես սահեցին ու կենտրոնացան ուրիշ տեղ:

— Ի՞նչ եք կարծում, կարմիրները կհաղթե՞ն, թե վոչ, — Հարցրեց հանկարծ՝ կրկին նայելով ինձ:

— Ինձ թվում ե, վորովհետեւ նրանց կողմնակիցները շատ են, Պետրոստանի մեծադույն մասը:

— Բայց չե՞ վոր սպիտակներին պաշտպանում են կտպիտակապան հզոր պատությունները, վորոնք չափաղանց հարուստ էն զենքով ու դրամով:

— Իսկ կարմիրներն ունեն գաղափարի և արդարության նման հզոր պինակիցներ:

— Մեր Զինան ու Եմիլ Դավիդովիչին այնքան վստահ են կարմիրների հաղթությանը, ինչպես հավատացած ենք, վոր ցերեկին

դիշերն և հաջորդում : Կյանքումս նման ֆանատիկ ու հռվատաց՝ յալ մարդիկ առաջին անդամն եմ տեսնում :

— Իսկ դուք մի՞թե թերհավատ եք, — Հարցրի յես ուղիղ նա յելով նրա աչքերին, վորոնք դժվար խնդիր վճռող մարդու աչքերի պես ամփոփվեցին :

— Յե՞ս, — պատասխանեց նա խոսքն յերկարելով, — Ճիշտ ասած՝ յես չափաղանց գեմ եմ այն ամենին, ինչ կովով, արյուներ դությամբ ե ձեռք բերվում . միակ ձգումս ե՝ անդորր, խաղաղ կյանք :

— Իսկ յեթե աշխարքը վերածվել ե յերկու անհաջող բանակի՝ անկախ մեր ցանկություններից, ի՞նչ զիրք պիտի բռնեք . . .

— Ի՞նչ դիրք յես ինչ դիտեմ . քաղաքականությունից շատ քիչ եմ հասկանում . ո՞վ դիտե վաղը ինչ կլինի : Յեթե ինձ հարցնեն, թե ի՞նչ ես ուզում, վոր վաղը լինի, մի պատասխան ու նեմ միայն — խաղաղություն, հանգիստ կյանք . . .

Մոքումս համեմատում եյի նրան Զինայի հետ, ի՞նչ ան սահման տարբերություն . սա խաղաղ, անհորձանք ծով, մյուս մըրկահույզ ու կատաղի . սա յերազող, անդորր հողի, մյուսն ան զուսպ ու համառ կամք . . .

Մեր դիմացը մի մարդարատ պուրակ կար բաղմազան ծաղիկ ներով պճնված, նարդիսի, մեխակի, համբիկի և կակաչի տերեների, յերբներանդ ու գեղեցիկ ժամում Եյին արեի ճաճանչների տակ, Պուրակի միջից մի անուշ յերդ դաշնակելով խոխոջում եր փոքրիկ առվակը : Մեր դիմավերեց թեսատարած թթենու տերեների մի թեարախ անծեղն եր թոշկոտում կամ ճնճղուկն եր ճըլում անհու մտնուկի պես :

Մեր աջ կողմը լայնարձակ ծառուղին եր, վորտեղից այդ պահ չին ճիչ ու ծովինչով, թնդացնելով զետինը յերկու տանկ Եյին անց նում : Անդիմական մի քանի զինվորներ նստել նրանց վրա, ծիսամորճ բերաններին, հաղթական հայացքով շուրջն Եյին նայում :

— Մի հարցնող լինի սրանց, ի՞նչ զործ ունեք մեր յերկրում, ինչո՞ւ չեք թողնում, վոր ոռւս բանվորն ու դյուղացին աղատ կերպով տնորինեն իրենց բախտը, — ասաց Գորմանը, վոր աբդեն վերադարձել, նստել եր մեր կողքին :

— Սրանց միջաղղային կապիտալն ե ուղարկել, վորպես մեր բանվորն ու գյուղացին չկարողանան տնորինել իրենց բախտը, կապիտալն իր գերիշխանության համար չափ ու սահմն չունի : Գորմանը մի քննող հայացքով վրաս, յերկի չեր սպասում :

Դոր յես ել կարող եմ նման մտքեր արտահայտել :

— Դուք իրավացի յեք, ընկեր, — պատասխանեց նա յեռան կով, — կապիտալը տիրելու և ճնշելու չափ ու սահման չունի, բայց մենք չափ ու սահման ցույց կտանք, սրբելով ու ջնջելով նրան աշխարհի յերեսից . . .

Նրա դեմքը պղղպատի պես կարծրացավ, իսկ աչքերում հըրթիսի նման կայծկլանց ինչ վոր բան . . .

Յերբ մենք վեր յելանք շարժվելու դեպի տուն, հեռվից տակավին լովում եր տանկերի անտարրժ ու տաղտկալի ճոխնչը :

IV

Մոխրագույն շալի մեջ կուլմած, զամբյուղը ձկուքին՝ սենակն մտավ մի կին, հագնվել եր վողոցներում բուլի՛ կամ կաթ վաճառող կանանց պես :

Զինան եր :

— Բուլի՛ չե՞ք կամենում, պարոն, համով բուլի՛իներ են . . . Դիտեցի նրան վոտքից-գլուխ, հասարակ գուլպաներն ու կուկիները, մաշված շրջադրեսան ու խունացած շալը :

— Դյուր չեկա, հա՞ . յե՞րբ պիտի քաղքենի մարդու հակումներից ամբողջապես աղատագրվես : Ֆեղ անհրաժեշտ և ալելի ու ալելի մերձնալ և մերգել պրոլետարիատին, վորպես վոր հոգին բուրովին հաստակվել, բյուրեղանա . . .

Ի զուր աշխատեցի համողել, վոր առանց միտումի նայեցի նրան, բայց Զինան չհամողվեց .

— Գիտեմ, եխ, ձեղ համար կին իր արժեքից կլնինի, յեթե հաշնակի այնպես, վոր կարողանա պրավել : Կանանց այն ասութեանի յեք հասցրել, վոր խեղճերը վոչ միայն կտրվել են հասարակական կյանքից, այլ գեղեցիկ արձաններ գառնալու համար հաղություն, զուգվում, զպարվում են . . .

Այս անգամ արդեն նեղացա այդ սուր և անտեղի նկատողություններից, գեմքս մոայբից : Զինան զգաց այդ, աչքերը գործակից հայացքով հառեց վրաս և մեղմորեն ասաց :

— Մի՞թե դու այդքան զբայցուն ես, այդպես շուտ նեղանում Բացատրեցի, վոր ինձ համար բուրովին նշանակություն չունի կինոջ զարդարանքը, պշրանքը, ինձ հետաքրքրում ե մարդը, հշմարիտ, աղնիվ մարդը . . .

— Հա՞ , հա՞ , եղ ի՞նչ հիանալի ճառ արտասանեցիք, «Ճշմարի՛տ», «աղբարժուական մտավորականի տիտիկ ճառ, «Ճշմարի՛տ» , «աղ-

նի՛վ» մարդ, ի՞նչ բարձրարարառ «վոսկի» խոսքեր: Յուրաքանչ չյուր դաստիարակ տարրեր հասկացողություն ունի աղմուռթյան և ճշմարտության մասին, վո՞ր ճշմարիտ ու աղմիկ մարդու մասին ե ձեր խոսքը, բուրժուա՞ր, մանր բուրժուա՞ր, թե բանվոր, — բացականչեց Զինան հեղնալից ժպիտով:

Զեյի իմանում ինչ պատասխանել. սուր, անխնա լեզու ունի՛ Զարմանալի ուժեղ եր հնչում նրա ձայնը, յերբ վոդեորվում ու հակածառում եր. վիճում եր այնքան, վոր վերջին խոսքը մնալի իրեն: Մի քանի բողեք անց հեղնական ժպիտը խույս տվեց դեմքիցը, աչքերն ամփոփեցին ու լրջացան:

— Ի դեպ, շատ սպազ կգա այդ ճառ արտասանել մեր ժենիսի մոտ, նրան շատ են դուր գալիս նման ինտելիգենտական խրառ ները: Առանց այն ել ժենիսին քեզ շատ և հավանել, անցյալ որը նրա և մեր կուսակցական ընկեր Գոլմանի հետ բակական ման եք յե կել. ժենիսին յեռանդով պատմում ու դովում եր քեզ...

Դարձյալ մատնվեցի նեղ դրության, վորից նա աղատեց դորձ նական մարդու ձևեր առնելով:

— Դե՛ռ, այլևս բավական ե զուր տեղ ջուր ծեծեյ: Այժմ անց նում եմ բուն հարցին. ինձ վրա զրել են չափաղանց ծանր ու սպատասխանառու պարտականություն: Յես պետք ե այսոր սրան տարածեմ բանվորների լրջանում...

Զամբյուղի բուլկիների տակից Զինան դուրս բերեց թղթեր՝ մի մեծ կտաղոց. դրանք կոմունիստական կուսակցության թուուցիկներն եյին, վորոնք ծանուցանում եյին Կարմիր բանակի հաղթական անում բանվորներին թիկունքից հարդարմագիստակներին, ապատամբուկել...

— Իրը թե բուլկի յեմ վաճառում, հա՞՛, հա՞՛, ... ծիծաղեց նի՛ թուուցիկների կապոցը տեղափորելով բուլկիների տակ, — մինչ զեռ պիտի գնամ դործարաններ, ապատամբության հրամիւրի բանվորներին...

— Քեզ իսկույն կծերրակալեն, — ասացի յես զարմանալով նի՛ անորինակ համարձակության վրա:

— Շանորդիքը մաղերիցս իսկույն ճանաչում են. իմ անունը հետախուզական բաժնի մատյանում արձանագրված ե «Վոսկինարար աղմիկ», դրա համար ել մաղերս ներկեցի, — պատասխանեց Զինան հենդիպելով դեմքիս լրջությանը փոխեց ծայնի շեշտը, նի՛ մեշտը, ելի բանիդ չեկա՞վ. հապա վոր ասում եյի, թե մեշտանելով:

կան դժերը գեռես կան քո մեջ, նեղանում եյիր, հա՞՛: Գործի համար, յեթե անհրաժեշտ լինի, դեմքիս դույնն անդամ կփոխեմ, կպատավեմ, ջաղու կդառնամ, միայն թե դլուխ դա դործը:

— Զինա, այդ ի՞նչ տոնով ես խոսում այսոր հետո: Վերջին ի՞նչ նշանակություն ունեն այդ բոլորը: Ինձ մտահոգում է միայն մի բան, վոր դու կընկնես նորից թակարդը, թե չե, յեթե ընկնես, ել այնտեղից յերբեք չես աղատվի...

— Ել այս անդամ վոչ մի ուժ, նույնիսկ քո ծանոթ ազգենը, յեթե ցանկանա, չպիտի կարողանա աղատել:

— Ուրեմն, պետք ե զդույշ լինել. առանց այն ել կարմիրները կհաղթեն, ել ինչին ե պետք այլքան իրար անցնելը:

— Հապա կուսակցության հրահանդները չկատարե՞մ: Ո՞վ սիրու կանի, ո՞վ կկարողանա դլուխ բերել այս դործը, յեթե վոչ յես...

Զինայի դեմքն ընդունեց նույն պողպատյա կարծրությունը, ինչ վոր նկատեցի Գոլմանի դեմքին: Ի զուր եր համոզելը: Նրան եր ճամբից հետ պահեն այնքան դժվար եր, վորքան փոթորկված ծովի հորձանքներ դապելը: Ներքին անորինակ անորին անյելով, չպիտես ինչու, ինձ թվաց, թե նրան մի բան պիտի պատահէի, վոր այդ մըրկվող, համառ, անհունորեն ոլայծառ ըորին այլևս յերկար չի դեկերելու այս աշխարհում: Վայրկենական այս ծանր նախաղպացումս այնպես ցնցեց ինձ, վոր աչքերս վացին խոնավություն, իսկ դեմքս շատ նման եր լուկան յերեսի դեմքին:

Նա ըմբռնեց իմ հոգեվիճակը, լուսաթաթախ դեմքը մոտեցավ ինձ, կուրծքս սարսուաց փոթորկված ծովի զարկից: Բամբակի որևէ փափուկ թաթիկներին իջան յերեսիս ու շոյեցին այտերս, իսկ շաբաթունքները, հուզումիցից դուզումից դողացող շրթունքները մեղմորեն խոսենին.

— Իրավ վոր դու չափաղանց զգայուն մարդ ես յեղել, Արամ, կանացի սրտի պես փափուկ սիրտ ունես: Յեղբայիր, յեղիք յերկաթի պես ամուր, պողպատի նման կարծր, կհաղթես կյանքին...

Ապա շալը կրկին քաշեց դլմին և դեմքն այնպես փաթաթեց: Վոր միայն աչքերն ու քեթն եյին յերեսում. թուուցիկներով ու բուլկիներով լիքը զամբյուղը վերցրեց.

— Դե՛ռ, մնաս բարե, սիրելի Արամ, սիրտս ինչ վոր վառ ար վկայում ե հենց դրա համար ել յեկա հրաժեշտի վերջին վար զույնը մատուցանելու քեզ...

Այս խոսքերով Զինան հեռացավ ինձանից :

Գլխարկս վերցրի ու հետևեցի նրան : Քայլում եր բուլկի վաճառող կանանց պես հանդարատ :

Փողոցում մարդկանց ծով եր, մայթերը չխէջխէկում եյին սովաների յերկաթյա կընկակալներից, հաջում եյին ավտոները, խօսքարերը հեծում սրարշավ նժույզների սմբակների տակ : Կավի տեղեկատուն գարցյալ վայում եր «մերոնց սաղմագիտական նըպատակներով փոքր ինչ նահանջելը»...

Քայլ առ քայլ հետևում եյի Զինային, յերեսունից-քառասուն քայլ նրանից յետ մնալով : Մարդկանց ծովում նշմարվող նրանոխրադույն շալը, տիրող կարգերին անկում նախազարասարութիւնը գրոշակ եր թվում, իսկ թիւին անցկացրած զամբյուղը լիթը սումբերով, վորոնք գնում եյին թնդացնելու այրված հոգիները, հրահրելու տրորված սրտերը...

Ե՞ր կույր, տարերային ուժ գրդում եր ինձ առաջ գնալ, հետմել մոխրադույն շալին և դեղին զամբյուղին, և յես ուշադրությունն լարած՝ ճեղքում եյի անշորդների շղթան, մեծ, խորհըրդավոր գաղտնիքներով զինված մարդու պես :

Զինան մտավ մի յերկրորդական փողոց և ուղղվեց քաղաքի ծայրամասը, մի քանի ծուռ ու մուռ փողոցներով անցավ և կանգնեց մետաղաձուլարանի հսկա շինության առաջ : Յետ դավագի և նկատելով ինձ, հանկարծակի յեկած մարդու պես կանգնած մնաց յերկմտանքի մեջ : Յետ ել կանգնեցի, և մեր լուռ հայացքները յերեսուն քայլ հեռավորության վրա իրար դատան : Զեռքով նշան տվեց, վոր թողնեմ հեռանամ, մինչ յետ համառորեն մերկի մնացել եյի տեղու : Հետո տեսա, թե ինչպես մոխրադույն շալը շարժվեց դեպի գործարանի մեծ դարբասը և անհայտացավ :

Իմ առաջ կանգնել եր մի մոայլ, հաղարաքանի բլուր, պուտերը կարմիր կղմինդրով շարած, կտուրին վիշտապի պես հեացող սե ծխան : Մի ուրիշ անգամ այցելել եյի այդ գործարանը, այնտեղ աշխատում եյին մոտ հաղար հինդհարյուր բանվոր :

Մոտեցա մուտքին, բայց մորուքավոր մի աժդահա մարդ դիմուլ ճամբաս պարսպեց :

— Զի կարելի :

— Իսկ ինչո՞ւ այն կնոջը թույլ տվիք :

— Թո, յա, брәтәц мой, не твой дело, — կիսովին թափված

առամներից թնդաց մի բամբ ձայն և դոնասանի փոսընկած կապույտ աչքերն ապակու պես սառեցին վրաս :

Հեռացա մի կողմ և ծանր տագնապով բռնված մարդու անհանգստությամբ սպասեցի :

«Այդ մարդն անպայման ճանաչում ե Զինային, այլապիս նըրան ել չեր թողնի», մտածում եյի ու սպասում անհամբեր :

Վիթխարի, յերկայն ոճի նման փողոցն եր ծղվում անշուռք տեսքով : Մեկը մյուսից հեռու, կարծես իրարից խոռված, բարձրանում եյին մեծ ու փոքր շինություններ, դետնին թառած ձերժակ թուչունների պես հանդստանում եյին, վայերում արեի առատ չողերը կամ յերադում մենակության մեջ : Միայն զործարանի ծիսանն եր վիրավոր դադանի նման տնքում կամ տրամվայի կածխանն եր վիրավոր դադանի նման եր դզբդալով դամիս, մի պահ զույտ գույնով ներկած վագոնն եր դզբդալով դամիս, մի պահ զունչ առնում գործարանի մոտ և նույն աղմուկով սլանում առաջ :

Ինձ չափաղանց հետաքրքրում եր այն հանգամանքը, թե Զինան ինչպես պիտի ցըի թուցիկները, ու չելի կարողանում պարզ պատկերել նման ծայրահեղ հանգնենությունը...

Յերկար կանգնելուց հոգնած քայլում եյի յետ ու առաջ, զիթու պոշեթաթախ փողոցը, կապույտ սալած յերկինքը, վորի գեմքը յերեմն յերեմն մըրտվում եր ծինկելույզի յերախից այսող սև ծխից :

Գործարանից դուրս յեկայի մըրաթաթախ մի բանվոր, մի քանի քայլ առաջ զնալով կանգնեց պատի մոտ, զբունից հանեց մի թուղթ և սկսեց կարգալ : Յետ անտարբեր անցա նրա կողքով, աչքի ճոթով նայեցի, Զինայի ցրած թուցիկն եր կարդում... Բանվորը ծուռ նայեց ինձ և թուղթը գրանելով սկսեց արագորեն քայլել փողոցի յերկայնքն ի վար :

Ամեն անդամ, յերբ գործարանից գուրս եր գալիս վորեն մետք, կուրծք զարնում եր ուժգին . կարծում եյի Զինան ե, վոր կը, կուրծք զարնում եր ուժգին . կարծում եյի Զինան ե, վոր կաղթություն տարած զինվորի պես զստնում ե ուղմաճակատից :

Ահա յեկայի ճաճուն, աններգաշնակ յերգերը հյուսող տրամակայի վագոնը, հանդստացավ ինձնից քիչ հեռու : Մի քանի մարդ կայի վագոնը, հանդստացավ ինձնից քիչ հեռու : Մյուս բաղեյին մեկն արագորեն անցավ կողքից և ականջիս մոտ լսեցի հետեւյալ փոխութը :

— Հեռացի՛ր, հետեւում են...

Զինան զամբյուղը ձեռին արագ վոստյունով թռավ և նստեց :

Վագոնը, վոր իսկույն առաջ շարժվեց :

Գործարանից դուրս ցատկեցին յերկու մարդ, սկսեցին կան-

չել և նայել այս ու այն կողմ : Սպառնացող վտանգից չըմած , կամ կած չհարուցելու համար մնացի մեխած տեղն ու տեղս , իր տրամվալի յեմ սպասում :

— Ո՞ւր գնաց այն կինը, վոր այս ըստեցիս դուրս յեկավ գործարանից, — հարցրին նրանք արյունոտած աչքերը վոլորելով վրաս :

Հայլաքեցի բոլոր ուժերս և սառնաբյուն պատասխանեցի.

— Ի՞նչ կնկա մասնի և ձեր խոսքը :

— Այն կի՞նը, վոր զամբյուղ ուներ ձեռքին:

— Հա՛, իմացա, այդպիսի մի կին դուրս յեկավ գործարանից:

— Հետո՞ւ, — ձայնեցին նրանք անհամբել :

— Հետո՞ւ, — դիմամբ խոսքս յերկարացրի, վորովհետեւ նրանք պատրաստվում եյին սուլել և կանգնեցնել սլացող վագոնը, — կարծեմ մտավ այն դիմացի տունը:

Յույց ավելի փակ դռնով ու լուսամուտներով մի հարկանի վառքը իկ շինությունը:

Զդիտեմ ինչո՞ւ, նրանք հայտառացին խոսքերիս և հայկոյելով ու գործողալով վաղեցին դեպի մատնանշած տունը:

Այդ վայրկյանին սրընթաց յեկավ տրամվայի յերկորորդ վագոնը. իսկույն նստեցի : Զինային հետապնդող մարդիկ ուժոնորեն բաղխում ելին ցույց տված դռւուր, միաժամանակ պործարանից գույք ելին յեկել ուրիշ մարդիկ, նույնպես գոոգոոում ելին :

«Թուղ ազմկեն ու կանչեն, Զինան թռա՛վ»... մտմառք ելի
և ուրախությամբ լցված հոգիս սլանում եր արագորեն հեռացող
վագոնի հետ...

A

Յերբ Յեկենիա Պետրովնային պատմեցի գործարանի գեղ
քը, աչքերը խոշորացան զարմանքից. նոր եր լսում. Զինան այլև
չեր վերադարձել նրա մոտ :

— Լավ վոր դուք պատահաբար այնտեղ եք յեղել, այլառին
Զինային կարող եյին ձերբակալել, — ասաց նա ընկնելով մտած-
մունքների գիրկը:

Յերկուսս ել չփաղանց մասհողվել ելինք, վոր ահա մի քանի
որ և Զնան չի յերեռմ:

— Արդյոք ո՞ւր կարող ե ապաստանած լինել:

— Ո՞վ գիտե, ինձնից շատ բան գաղտնի յեն պահում, ո՞վ Կ թմանում նրանց գործերը, — պատասխանեց Ենթգենիան Գետրով:

նաև և սկսեց պատմել Գոլմանից լսած վերջին տեղեկությունները, թե ինչպես սպիտակները նահանջում են խուճապային և անկարգ կերպով, լրացրերը ռազմաճակատի մասին վորոշ տեղեկություններ չեն տալիս, վորովհետեւ լավ բան չունեն հաղորդելու և շատ ուղղ կարող ե Կուբանն ել ընկնել...

Յելբ վերադարձա տուն, սենյակիս զուան սպառուս մը օդա-
շովի ծառան. նա հնձ խնդրեց իր տիբոջ մոտ:

«Պարտքի համար և կանչում անիծածը»... մտածեցի ու մի «Պարտքի համար և կանչում անիծածը»... մտածեցի ու մի պահ ընկա տատանման մեջ, դնա՞լ թե չե: «Դուցե մի նորություն պահ ընկա տատանման մեջ, դնա՞լ թե չե:... Վորոնեսի դնալ:

Ն բել գնդապետից, ուղում է հայտնել»... Հայությունը եւ Արքական Սերգեյի քաղաքացիություն աղայի պես՝ թիվքեւ կը քաշում:

— მარხ, აխალებ, ჯნე ქერძოს, იყოთ და და
შოთავები ხი, ჯნე დაგისტოდ:

Խոդը եղի ելի սպասել, վորովհետեւ ծնողներից չունել ու
կմահ սպանալի:

— Սպասելը կսպասեմ, բայց նեղն եմ, յեղբայր, նեղ առու-
պուրս քիչ, ծախսս շատ, շատ...

Այսպես ամպեց ու մթնեց նրա գեմքը, վոր կարուի բառը՝
Վետ անե և աշա ախտի սկսի արտասլեւ..

ՄԵԼԻՆԵՐՈՒՄ պահուն մոտ յեկալ, բերանը խիստ մոռեցրեց
ՄԵԼԻՆԵՐՈՒՄ պահուն մոտ յեկալ, բերանը խիստ մոռեցրեց

— Յերեկ գնդապիտը քեզ ել հարցնում, խոճ վորեւե բան

Կապահագութ մի աչքերս ընկեռվեցին նրան:

— Յես ինչ զիտեմ, յեղբայր, — շարունակեց Երկրու ուրեմն՝
իշլ, — վատ ժամանակներ են, եսոր կանք, վաղը վոչ, զգուց
կաց, մի խառնվիր սրանց ներքին գործերին, չեղոք պահեր քեզ,
չեղոք... Այս իռար քիթ-պոռնադ ջարդեն, ի՞նչ գործ ունեա...

Յեղա առա ևն թարսովել, զորքը չէ

իսուր ե, այնպիս մթնել ու թթվել, վոր հետը խռովել չի լինում
ինչ վատ որեր ենք ապրում, ա՞և...

Նիկիտ Սերգեյիչը շատ խորը հառաջեց, իսկ յես ստիլված էլլ մեխանիզմների տեղը և զգալ նրա քեխսերի տակից սոզում կող ծխոտ և արագախառն շռւմը:

— Համա՛, յեթե եղ յեկողները խելոք, բան հասկացող մարդիկ լինելին և ամեն մեկին թույլ տային աղատ կերպով առուտուննել, մող աշխատել, հր' ..

Աչքերն ամփոփվեցին և դարձան փոքրիկ պայուսակն զնողեր

Տուն վերադարձին ուղեղս չարչարում եր այն հարցը, թե
դնդապետն ինչո՞ւ պիտի իմ մասին հարցնի... Թվում եր, թե սեն-
յակումս դարձյալ կհանդիպեմ ինձ ձերբակալող յենթասպային,
վոր այս անդամ ավելի թունոտ, դիվային ժպիտով կումավորի և
կրագականչի.

«Ո՞ , յերիտասարդ պարոն , նորից պատիվ ունեմ ձեզ Հյուրըն-իակեռու մեր նկուղում , դե՛հ , առաջ ընկեք»...

Բարեբախտաբար այս անգամ սենյակու չղավաճանեց ինձ՝
Նյուուան ել յեկալ, դեղձանիկի պես ճվլաց, ճվլաց ու գնաց: Գլ-
շերը քննցի անհանգիստ: Քամին բավականին չարաճճի խաղիք
խաղաց գլխիս, յերբեմն-յերբեմն դիվահարի պես սուլելով ծեծում
սենյակիս զուռն ու պատուհանները. իսկ ինձ թվում եր, թե յեկել
են խուզարիելու...

VI

Շուկայում ուտելիղեն եյի դնում, յերբ մի խանութի առաջ կանգնած գտա Զինայի հորաքրոջը՝ Վարվառա Նիկոլայևնային։ Վազո՞ւց չեյի տեսել։ Աչքերն արտասուզով լցվեցին, յերբ մոտեցաւ ու բարեկցի. մի կողմ տարավ ինձ և դողդոջ ձայնով հայտնեց, մոյ Զինան ձերքակարված ե...

— ՅԵՐԱԾ և ՎՈ՞Րակեղ, — Հարցը ի յես անհամընը

— Յերեք որ առաջ, փողոցում. ինձ հայտնեց գրաշաբ իլլու^շ
կինը և խնդրեց, վոր Հաց տանեմ բանտ, սակայն... հեկեկաց պա-
ռակը թաշկինակը սեղմելով աչքերին, — յերեկ Հաց տարա, վերց-
րին, իսկ այս առավոտ՝ մերժեցին, առարկելով, վոր Հաց ունի,
առանձին ե...

Վարվառա Նիկոլաևնայի առանց այն ել թաց թաշկինակը նորի թուջին առասպառքով :

Այս շուրջը աիրում եք չուկայի սովորական ժիւրը. առնում՝

ծախում ելին, սակարկում, զիմում, իրար հայոցում անվայել
խոսքերով, սրախոսություններ անում ու ձայները խայտաճամռեկ
ու բաղմաթրթիո զրնդում. ելին ամենուրեք. Մինչ յես քարացել,
մեխմել ելի տեղն ու տեղը, հայացքս դնացել եր ինչ վոր տեղ,
միտքս մընել եր, կարծես թե իրմէլ ելի ինչ վոր լողիծուն աղմի
մեջ...

$$= b' \mu, b' \mu, 2 \mu \omega \dots$$

Ինչ սթափեցրեց պառավի աղեկուոք Հառաջանքը, մեկ և կանուն ծախոսոք, մոռ ականջիս մոռ զիլ ձայնով կանչեց:

— Հայութ ինչ անենք, հա՞յ, մի ճար չի՞ կարևոր անել նրան
Վրիելու:

Ի՞նչ կարող ելի անել... յերբ ինքը ել դասվում ելի դասովլան
որի տակ:

Վառվառա Նիկոլանանցից բաժանվեցի չափազաց ըստուած և բանեցի տանս ճամբան։ Մեր փողոցի անկյունում դեմք յերած է առաջին առաջնական համայնք ունեմութիւն։

— Հեռացի՞ր խկույն, — ասաց նա հեացող ձայնով, — քո
ոհնակու ոննալորներով լիքն ե, խուզարկում են...

Այսպէս զիմանալով ինչ անել :

Օ ասցը առջևու և լ և մ կ առագործին իջա

Մի կույր, ճաղատագրական ուժ ինձ զրդեց մտնել մի խռով նրբանցք և բաղսել ֆոկինի դուռը: Սենյակն ընկա ինչպես նետ: Յեգեհնիա Պետրովնան վախեցած աչքերով դեմս յելալ: Կարճ պատմեցի սենյակիս խուզարկության և իմ վախչելու մասին: Ճեռները դյաձգորեն կցեց իրար և ասաց:

— Հայ վոր իմացել եք և ժամանակին փախել . . .

Բայց նա ավելի վրդովվեց և ծնկները կոծելով հռոաչեց, յերբ հայտնեցի Զինայի ձերակալման մասին:

— Ել Զինան այնտեղից չի աղասվի, յերբեք... կանչեց Յեփ-
ակնիա Պետրովնան դողդոջ ձայնով :

Յերբ հաղորդեցի այս մասին, թե ինչպես կարուղառ Նիկոլաև-
նան յերեկ հաց և տարել բանտ Զինայի համար՝ վերցրել են, իսկ
այսոր վոչ, աղեկտուր ճիշով հծաց.

— Ո՞ւ, ուրեմն Զինային սպանել են, ել չկա մեր Զինան...

Նրա գրավիչ դեմքը մառախուղվեց և դարձավ աշնանային յերկինք, աչքերից դուրս ցայտեցին արտասուզի կաթիլներ, վորոնք շափյուղա քարերի պես պրապացին այտերի վրա. թաշկինակավ որբեց արտասուզը և մնաց քարացած, թաց աչքերը մի կետի...

«Ել չկա՞մ մեր Զինան»...

Արձադանքիլեց հոգուս մեջ նրա վողբասաց հծծյունը . աչքերս
մթնեցին , ու շշկված մարդու պես չեցի խմանում ինչ ասել : Մի
կողմից Զինան եր պատկերվում առաջ իր նիշար դեմքավ , մյուս
կողմից սենյակս՝ տակն ու վրա յեղած , խառնախնթոր :

«Արդյոք ելի նույն յենթասպա՞ն և իր գաճաճ մարմնով, ծուռ
սրունքներով, կանաչ աշխերով կանդնել սենյակում»... Բայց յեռ
ի՞նչպես եյի փախչում, ի՞նչպես ամեն վայրկյան կարծում եյի,
թե յետեսից զոռում են «կանդնի՛ր»... Ի՞նչպես եր շուրջո մշուշ-
վել, մթագնել, ամեն, ամեն ինչ վայրիվերո դարձել, խառնակ-
վել... Մտամոլոր հայացքս պատուհանի վարագույրից ստեղ-
տաել դուրսն եր ընկնում, գեղի խուլ ամայի փողոցը Ահա վորտե-
ղից վոր և ներս պիտի խուժի յենթասպան սվինավոր դինվորների
հետ և պիտի կանչի հեղնալից ժպիտով.

«Ո՞ւ, յերիտասարդ պարոն, եղ ինչ նախանձելի տեղ՝ եք գտնել Թառնվելու. մերիտասարդ պարոն»...

Այս ցավատանը նոպաներն անցան և մնաց այն մղձավանչք։ Թէ ի՞նչ պիտի անել, ո՞ւր թագնվել։ Այս միտքը հաղորդեցի Յեշակնիա Պետրովին։

— Մի՞թե մոտիկ բարեկամ կամ ծանոթ չունեք, — հարցրեց
նա բնդկատելով իր քարացումը:

Այդ քաղաքում յես այդպիսին չունեցի:

— Ե՛հ, առանց այն ել այստեղից դուրս գալը շատ վտանգա-
վոր է, կարող են փողոցում ձերբակալել, — ասաց մեղմիվ և մի
քանի բոպի մասձելուց հետո ավելացրեց, — ամենահարմար վայրն-
ելի այստեղ է, կմնաք մեզ մոտ. յես կխնդրեմ հարեան ընտանի-
քին, վորապես իրենց սենյակում ձեզ զիշերելու տեղ տան. նրանք
յամ մարդիկ են, չեն մերժի:

Ես այս պահին ու ձեղ եւ ձերբակալե՞ն:

— Ի՞ով յ-ը — ի՞ոնչ արած, թող ձերբակալեն, մի առանձին արժեք սեր
կայացնող իր չեմ, աշխարհը վորեւ ցավ չի զգա ինձ կորցնելու
համար...

Յերախտալից աչքերս մի պահ կենտրոնացած էրաւա, գույքը՝ գույքոնում եր չորհակալության մի հարմար խոսք:

Հարեանների հետ Յելիզենիս Պետրովսա առաջ կազմակերպությունը գաղտնաբառություն առնելով ներկայացրեց նրանց : Մերուկ ամսա-
կ համաձայնությունն առնելով ներկայացրեց նրանց : Մերուկ ամսա-
կինների ինձ ընդունեցին վաղեմի բարեկամի պես սրտապէին :

Կիպկալով եր նրա աղջառսը

Քուկ Եր: Դեմքին առողջություն ու կայտառություն, աչքերը բարության ծով, մարմինը տարիների հախուռն զարկից տակալին ուղիղ, ուսերը հաղթու կանոնավոր: Հազին դեղին հօճակներով մոխրագույն բաճկոնակ, բայնդիրկ, կապույտ շարվար, վուներին զինվորի լայն փող սաղողներ: Կինը—Ավրոսիա Ալեքսեյևինան—ամելի գառամած եր յերեսում, թեև ամուսնուց հինգ տարով փոքր էր, սպիտակ դլաշորով, կարճբոյ, դեմքը խաշմուտված, ակոս տուկոս, փոսքնեած աչքերի մեջ պսպղում եյին յերկու փոքրիկ, կանաչափայլ դնդեր:

— Համեցե՞ք, — հարդանքով հրավիրեց մեղ իվան Մաթվեյի՛քը, — կարող եք մեղ մոտ ապրել, աստծու ստեղծած մարդուն անտեր չենք թողնի:

Նրանց սենյակն այնքան ել մեծ չեր. ուղան, պահարան, մահ-
ճակալ ու թափառ—ահա! աչքի ընկնող կահկարասիքը:

Իրեկուն շուտ պառկեցինք քնելու : Յես տեղավորմեցի Կիոլ՝ կտղովների սենյակում թափուի վրա, իսկ պառավը փոխադրվեց Յեմգեհնիա Պետրովնայի մոտ :

Իվան Մատվեյիչը տնքոնքալով և Գոֆմալով մութի մէջ հանեց յերկարածիտ կոչելիները : Բաճկոնի կոճակիներն արձակելիս միքանի անգամ հազար և մաքրեց կոկորդը, անկառ խոսքեր մրմուց քթի տակ և պառկեց անկողին . մի քանի անգամ մահճակալի յերկաթներն աղեկառը ճիշով տնքացին նրա մարմնի ծանրության տակ : Քիչ հանդուսանալուց հետո, սկսեց խոսել զեսից-դեհից, տրտնջալ կյանքի ու ժամանակների վրա : Իր կյանքի մասին խոսելիս պարզվեց, վոր Սլավյանսկ ստանիցայիցն և, վաղուց և տեղափոխվել քաղաք : Գյուղում մի ջրաղաց ունի, վորի յեկամուտը բավկան թեթևացնում և իր առլուստը : Անծառաւն ունկնդրում եյի նրան՝ մի ականջն լուսամուտին, մյուսը ծերուելի բերանին : Շատ քավական եր ծերուկը, վոր Կուրանի անցյալին ու ներկային մի ունկնդիր գտավ, վորին կարող եր յերկար-յերկար պատեհել և առկանջը լցնել հետաքրքիր ու անհետաքրքիր պատմություններով :

— Առատության յերկիք եր մեր կուրանը, տարին տասնյակ
միլիոններով հաց եր արտահանում Յեփրոպա: Խաղաղ ու յերշա-
նիկ եյին ապրում կաղակները, լի ու լի: Պատերազմն ու այս յեղ-
բայրասպան կոփիլսները քայլայեցին կաղակի անտեսությունը, չատ-
ու շատ ջահել կյանքերի արևը խավարեց: Ծովի պես առօտ հացն
այժմ հազիկ յերկիքն բավարարի, իսկ յեթե կոփիք շորունակիլի:

ալելի յերկար, կարող ե և սով ընկնել։ Մենք, կազմիներս կոմի-
լու հաշիվ չունենք, ամենքս ել հող ու կալվածք ունենք, լավ առ-
քում ենք։ Մուժիկն ե, վոր հող չունի և դբա համար ել կովում ե։
Մուժիկը հիմար, տղետ, խավար մարդ ե, կազակի նման խելոք ու
քաջ չի։ Յեթե մուժիկը խելոք լիներ, իր գործն իմանար, վաղուց
ձեռք կրերել հող ու կալվածք, ու այս ցավն ու կրակը չեր թափվէ
ժեր դիմին։

Հրացանաձղության հատ ու կտոր ծայներ ելին գալիս քաղաքի զանազան մասերից : Հեռուներից լսվում ելին կազակների յերդի բամբ հնչյուններ կամ չներն ելին վոռնում աղիողորմ ծայներով : Խոկ պատի ժամացույցը տկտկում եր անմերջ, մերթ ընդ մերը արձակում միալար դնդոց, կարծես մի սիրտ եր բարախում պատին, ժամանակի հավատենական յերթ վորոշող կենդանի սիրտ :

Կես գիշերից անց եր, յերբ իվան Մաթվեյի էմահանակը կողմից լսվեց միապաղապ, խուլ խոմիոց, ապա այդ խոմիոցը աններդաշնակ հնչյունների և Փափոցի վերածվեց, կար-ծես ջուր եր յետ դալիս կապարիչով պինդ փակված կաթուայում:

Զգացի մի անուշ թուլություն. մի անծանոթ, անչռչափելի
ձեռք փակեց աչքերսու ամբողջ մարմինս քնքորեն խտանելով տա-
րավ մի անհայտ անազմուկ աեղ:

VII

Յերբ վեր յելա, արևը փառահեղ բաղմել եր հանդիպակած շենքի տանիքին և մի խուրձ վոսկեթել ճառաջալի ցնցուղել պատուհանից ներս :

ինձ վողջունեց Իվան Մաթվեյիչը՝ «զծօրօ, օքատ» կամ չելով. ձայնը վորոտի պէս թնդաց ամրակուռ կրծքից և ինձ հագուստը առաջնութ տան ու կայտառութ յուն:

— Նուս, ի՞նչպես ես, բратեց մոյ, լո՞վ քանդու, կառ, զայտը ի մոյ, զո՞ւմ լու..

Ապա առաջարկեց իշխել բակը:

— Մի վախի, վոչ մի աչք չը տառալ եւ,
բուկը, նկատելով իմ վարանոս քայլվածքը:
— Նիւղ մեռելատան պես տիտուր,

Մտանք մի մութ, ընդարձակ սկզբել ամայի համար կատարել է ամային գույսակված եր վառելափայտի մի ահազին ամայի : Հատակին կուտակված եր վառելափայտի մի ահազին

շեղակույտ, վորի խորքում մի մարդու տեղավորվելու չափ մի բացվածք կար հավաբնի նման :

— Ահա՛, սիրելիս, կթագնվես այստեղ, յեթե այդ անհրաժեշտ մինի. անցքի բերանը կծածկենք փայտերով ու սատանան անդամ չի իմանա, վոր այստեղ մարդ կա թագնված :

Շնորհակալ յեղա նրա ուշադիր վերաբերմունքի համար և մենք կրկին վերադառնք սենյակը :

— В случае необходимости, голубчик мой,—мurmуром кръкваш Մաթվեյիչը ճանապարհին :

Յեվգենիան, տնային կապույտ շրջազդեստի մեջ, սեղանի վրա թեյի պարագաներն եր դարսում :

— Հը՛, գո՞հ եք ձեր նոր կյանքից, —հարցրեց մտերմաբար:

— Շատ գոհ եմ, մանավանդ իվան Մաթվեյիչի նման պատվական ծերուկ ունեմ վորպես ընկեր :

— Ե՛, պարոնայք, ինչե՞ր եք բամբասում իմ մասին, զգո՞ւ՞չ հա՞՛, կթակեմ... կանչեց իվան Մաթվեյիչը, վոր աննկատելի կերպով ինձնից հետո ներս եր յեկել :

Կուշտ ծիծաղեցինք նրա հայրական սպաւնալիքների համար: Յերբ Յեվգենիային նկարագրեցին նկուղում պատրաստված թաղլուտարան-հավաքումը, ավելի բարձր ծիծաղեց և դվարթ ձայնուտաց:

— Ուզում եք թուչուննե՞ր ողահել այնտեղ, ինչ ե:

— Այո, այո, ուզում եմ մի այսպիսի խոչոր, անթե թուչուն ուահ հել նկուղում, —պատասխանեց իվան Մաթվեյիչը ձեռքն ուսի՞զ գնելով :

Շուկայից վերադառնալ Ավոտիա Ալեքսեյեվնան որվա լուսիքը և ուտելեղենով լիք դամբյուդը ձեռքին:

— Նու, Դունիա, ի՞նչ թաղա խարար ես բերել մեղ, իմ սիրելի Դունիաշա, —բացականչեց իվան Մաթվեյիչը դրկելով պառավիշեցը:

— Ի՞նչ թաղա խարար, ծերուկ, աշխարհը տակն ու վրա յի լինում, քանդվում ե, —պատասխանեց պառավիշելով ամուսնու գրկից :

Յեվգենիան սկսեց բարձրաձայն կարդալ լրագիրը: Առաջին եղում, ուղմահաղորդագրության բաժնում գրված եր. «Հակառակորդի զորայուներն անցան Բաթայսկ կայարանը»...

— Բաթայսկն անցա՞ն, այդ նշանակում ե բոլցեկները մտնում

ն կուրան: Ուրեմն եղուց-ելոր կոմիտարներն ավտոմոբիլ բարձրած կղան Յեկատերինողար... բացականչեց իվան Մաթվեյիչը:

— Թող վոսները կուրդի չգա՞ն, ասոծուն, ցարին չճանաչաղ-ները, աշխարհը կործանողները թո՞ղ ճանապարհին մնան, —քրթ-քնչաց պառավիշելով ճաճպացնելով անատամ բերանը:

— Ե՛, պառավիշ, իմ ու քո կարճ խելքովն աշխարքը չի խաղաղ-իք: Յես ու գու ծերացած մարդիկ ենք, գերեզմանի դառնու հասել, թո՞ղ ջահելները մտածեն, — միջամտեց իվան Մաթվեյիչը վերջ պալով պառավիշի միթիվնթոցին:

VIII

Հետեւյալ որը իվան Մաթվեյիչն ավելի կարեվոր լուրեր բերեց: Կարեվորն այն եր, վոր սպիտակները պարպում են քառաքը:

— Առավոտը անդլիական գինվորական միսիայի չենքից դըունիկը վերցրին: Ասում են, վոր կայարանում ասեղ գցելու տեղ չեա, գեռացողների այնքան մեծ բաղմություն է կիսովել: Դասու, քաղաքի անկումը յերկու-յերեք որվա հարց ե... ասաց ծերունին խորհրդավոր արտահայտություն տալով զեմքին:

Իվան Մաթվեյիչը մուտքի դոները յերկաթյա նիդերով ամ- բացրեց, «ով գիտե, մըթմըթաց, խառն ժամանակ ե, քաղցած թա- լանչի մարդ շա՞տ, կարող են ներս խուժել»... Մահճակալի տակից հանեց վորսորդական յերկփող հրացանը և պատրաստ պահեց «Ահ հայկական ըլուակ»—ի համար...

Խունացած բլուզը, առանց մեծքուկապի, պարկի նման ուռել եր ժարմանի վրա: Լավաշի պես կուրծքը, պարանոցի մոտ, խաշվել եր արեկից: Բարձրատիղ սապողները զմփում ելին միջանցքում, աւեր նա փայտ եր կտրում կամ բեեռ մեխում վորեն սեղ: Ցերեկ- ները շարունակ լսվում եր իվան Մաթվեյիչի ուրագի կամ ողոցի աղմուկը, վորի հետ նաև նրա կոկորդալից, ուժեղ հազը:

Բարբուշկան խոհանոցումն եր ափօնեներն ու ամաններն եր չի չխացնում կերակուր պատրաստելու համար:

Յեվգենիայի հետ ռենյակում զրույց ելինք անում: Յննդավայրը ելի նկարագրում—Անդրկոփկասը, վորի լեռներն ու անառները չափազանց հետաքրքիր ելին նրան:

— Զանձրացել եմ քաղաքի ժխորից, —ասում եր Յեվգենիան, մեր այս անծայրածիր տափաստաններից, յերբ աչքը հակայած վալ հարթավայրից ու նրա վրա կտխված գորչ յերկնքից վաս ուրիշ Հորձանքում—8

բան չի տեսնում: Վորքա՞ն լավ և ապրել կանաչագեղ սարերի գով լանջերին, թափառել սաղարթախիտ անտառների խորքերում: Այդպիսի վայրում մարդս կմոռանա աշխարհի ժխորը, ամեն հօգու ու վիշտ, կընկնի քաղցր մտորումների և ցանկությունների զի՞ր կը... Յերբեք չեմ մոռանում Ուկրայինայի սովերախիտ անտառները, վորոնք գեղեցիկ են ու չափազանց հաճելի, սակայն այնտեղ չկան բարձրաբերձ, ճյունապատ սարեր, ինչպես ձեր ծննդավայր ըստմ...

Առստացան նրան տանել Անդրկովկաս, յեթե ճանապարհները բացվեն: Աչքերը պլաղացին ուրախության շողերով:

— Ո՛, վորքան յերջանիկ կլինեմ, յերբ ինձ դգամ հարացի բարկ արեկի տակ և փարթամ բուսականության դրկում, իմ վազեմի ցնորքս... բացականչեց նու պատանու խանդաշառությամբ, անընդող աչքերի մեջ ծովացած հիացք...

Նստել եր բազմոցում, սպիտակ, փամփլիկ ձեռնրը դրել ծընկերին, մինչեւ ուսերը մերկ պարանոցը մարմարակերտ ու վողորկ: Մաղեր թափիչի պես շոյող՝ քունքերին ու ճակատին ծով առ ծով, իսկ դեմքին լուսեղեն յերազ... Զգիտեմ ինչպես իմ հոգում մեղմ մասահ անցնում եր մի անուշ զգայնություն: Կարծես ճակատադիրն ինձ գիտմամբ եր նետել այնտեղ, վոր ամեն բոպե տեսնեմ նրան, ունկնդրեմ արծաթաթել ճայնը: Ճակատագիրը մի խուլ խառն բաղում մեր մեջ... Հակառակ յուրաքանչյուր վայրկյան սպառնացող վտանգին, ինձ դղում եյի հանդիսա այնպես, ինչպես թըռչունը կապույտ յերկնքում: Յերբեք տաղտկայի չեր թվում ամառ վատառ որը, վոր այնպես ծանրաշարժ ու դանդաղ եր նահանջում: Ու մի՞թե ճանձրալի պիտի անցներ որը, յերբ կողքիս նստել մի գեղեցիկ կին, անուշիկ ժպիտներով անուշիկ բաներ եր պատմում ու մեղմում վտանգը, վոր կարծես թե չողել եր փողոցի դասնը, ոռուք ժանիքներով հսկում...

IX

Յերեկոյան, յերբ պառկեցինք, իվան Մաթվեյիչն, բոտ իր սովորության, պատմեց բազմաթիվ արկածներ կաղակների կյանքից, կուբանցիների դյուցազնական հատկություններն ու սխրագործությունները դրվատեց: Վերջը պատմեց, թե ինչպես լեռնա կաննա՞ւ վերջին խլբառմների ժամանակ ցարն այցելել է կուբան:

— Յերբ ցարն այցելեց, մեր ատամանը ներկայացավ աղ ու հացով: Մեր ատամանը վիթխարի հասակով, Փիղիքապես ուժեղ, քաջ ուղմիկ եր, ամբողջ կյանքն անց եր կացը թուրքերի, ին-

ուուչների և լեզուների գեմ կովելով: Վորքա՞ն ինդուչի ու չեչենի առուլ եր այրել, նրանց կտրիմ կովողներին զերել ու սպանել: Ցարը զորահանդես սարքեց, վորից հետո սրախաղ տեղի ունեցավ և առաջին մրցանակը շահեց մեր ատամանը: Ցարը կանչեց նրան իր ժողով և ասաց. «Հե՞յ դու, ատաման»...

Սակայն դաժան քունը խեղդեց ինձ իր ճիրանների մեջ և յես չկարողացա հետեւ իվան Մաթվեյիչի պատմությանը: Զդիտեմ, վորքան եյի ննջել, հանկարծ ականջիս մեջ ճայթեց ծերունու բամբ չայնը:

— Հե՞՛, յերիտասարդ պարոն, լա՞վ խոմփում եք, խոսք չէառ առ ո՞ւմ համար եյի պատմում այնքան հետաքրքիր պատմություննեւս:

Աչքերս բացի ու մեղքս ծածկելու համար հայտնեցի, վոր ու շաղիր լսում եմ:

— Դե՞հ, յեթե լսում եյիք, համեցե՞ք կըկնեցե՞ք իմ վերջին խոսքերը, — պահանջեց համառ ծերուկը յերեսն իմ կողմը շըջելով, ընճռացնելով մահճակալի յերկաթյան ձողերը:

— Զեր վերջին խոսքերն եյին. «Հե՞յ դու, ատաման»...

— Բուավո, յերիտասարդ պարոն, բռավու. լավ եք ականջդրել, խոսք չկա: «Հե՞յ դու, ատաման» վաղուց ասել պրծել եմ, հետո պատմեցի, թե ինչպես ցարը հրամայեց ատամանին արշամել լեռնացիների դեմ, թե ինչպես մեր ատամանը կտրիմ կուբանցիներով և անց Դաղստան...

Շատ ներողություն խնդրեցի, վոր անհծյալ քունը խանդառ լսել նրա վերջին խոսքերը:

— Սատահան տանի, հետաքրքիր մասը նոր և սկսվում, մինչ լուսք քնում եք. կանայքն են այլպես թուլակամ, յերիտասարդ պարոնն...

Սի քանի ըոպե լոեց. նեղացել եր անուշագրությանս վրա, սակայն ինդրեցի, վոր շարունակի իր հետաքրքիր պատմությունը, սատահանալով շսել մինչեւ վերջ: Կրկն վոգերպեց:

— Ուրեմն ատամանը կտրիմ կուբանցիներով գնաց Դաղստան, ըստունոտ կոիվներ մղեց, լեռնցիների շատ առւներ այրեց. բնաւուներ փախչում եյին սարերի անառիկ վայրերը, թագնվում հետուոր, անմերձնեալ անձանցիները: Մի առւլում նա զերեց լեզգինի ցեղապետի աղջկան: Զերանին: Առասպեկտական գեղեցկունը և ունեցել այդ աղջիկը, փարթամ հասակով, սև աչքերով.

տղամարդու նման քաջ ե յեղել. վոչ վոք չեր կշտանում նրան գի՞
տելուց : Մեր ատամանը նրան փեշքեց ուղարկեց ցարին . . . Հը՝
դարձյալ քննցի՞ր . . .

Ականջիս մեջ հանկարծ վորոտաց իվան Մաթվեյիչի բաժի
ձայնը :

— Վոչ, լսում եյի . . . կանչեցի յես քնաթաթախ աշքերս բա-
նալով :

Այս գիշերը հակառակի նման քունս այնպես եր տանում, վո՞
կարծես մի քանի որ իրար վրա չեյի քնել : Գլուխս ծանրացել եր ու
աչքերս փակվում եյին, չնայած իմ գերմարդկային ճիգերին :

— Ապա՛, կրկնեցեք տեսնեմ, վորո՞նք եյին իմ վերջին խո-
քերը, — համառեց ծերուկը :

— Զեր վերջին խոսքերն եյին, — պատասխանեցի յես ծոր տա-
լով, — կարծեմ, նրան փեշքեց ուղարկեցիք ցարին :

— Խե՛, խե՛, խե՛ . . . խոմ յես չեյի փեշքեց ուղարկողը, յերի-
տասարդ պարոն, թյուրիմացության մեջ եք, փեշքեց ուղարկողը
ատամանն եր . . .

— Ախ, ներողություն, սիալվել եմ, փեշքեց ուղարկողը ատա-
մանն եր :

— Այդպե՞ս, մեր ատամանը լեռնցի աղջկան փեշքեց ուղար-
կեց ցարին : Մայրաքաղաքն իրար անցավ այդ թանգարին նվիրի-
համար : Պատմում եյին, թե ինչպես ցարի պալատում, ինձույթ
ների ժամնակ, Զեյրանը դուրս եր գալիս լեռնցի սղամարդու շո-
րերով, վոսկեկուռ խանչալը կրծքին, հրաշալի լեզգինկա յեր պա-
րում ու բոլորին հմայում արևելյան իր չքանդ գեղեցկությամբ . . .

X

— Հը՛, յերիտասարդ պարոն, Հկարողացաք համբերել ու մի՞
չել վերջ չլսեցիք հետաքրքիր պատմությունս : Լա՛վ կատարիցի՞ւ
ձեր խոստումը, խոսք չկա, — զանգատվեց մյուս ատամուտ ինքո՞յ
Մաթվեյիչը :

Քունը հիշողությունից սրբել եր շատ մանրամանությունները
ու նրա յերկար պատմության : Հիշում եյի, վո՞ր գիշերը նա պատ-
մել ե ինչ վոր բան ատամանի, ցարի ու լեզգի աղջկա մասին : Ի-
չարցին, թե ինչ յեղավ վերջը, իվան Մաթվեյիչն իր պատմու-
թյունը համառոտակի յեղափակելով՝ ավելացրեց :

— Ուրիշ բան եր մեր ատամանը, նրա պես քաջ, գաման կո-
ղակ, միաժամանակ՝ բարի, իմաստուն մարդ չի յեղել կուբանու

Միանգամայն գոհ մնացի, վո՞ր իվան Մաթվեյիչն արդակու-
հարձ կապեց և ազատուց ինձ ակամա ունկնդիր լինելու վիճակից :

Յեղինիա Պետրովնան հաղորդեց, վո՞ր սպիտակ բանակը ա-
րագորեն հեռանում է քաղաքից և առաջարկեց գնալ Կիպկալովի
աղջկա սենյակը՝ լուսամուտից դիտելու գլխավոր փողոցի ան-
դուղարձը :

Կիոլկալովի աղջկեց, արկին լյուրան, մեղ շատ սիրալիք լն-
չունեց : Բարձր, շիկահեր կին եր՝ դվարթ դեմքով, աչքերի մեջ
աղիտն անշակաս, կարծես կյանքումը յերբեք վիշտ ու հոգա շեր
ակսել : Յերկու վո՞քը աղջկները մեղ տեսնելով, փաթաթվեցին
ֆոր փեշերին և հետաղոտող հայացքով նայում եյին :

— Հը՛, բայիկներս, ինչպես եք, շատ չարություններ անո՞ւմ
եք, — հարցուց Յեղինիան փաղաքելով նըանց պանդրահեր դը-
մուխները :

— Ո՞հ, այնքան չարաճի յեն, վորքան կարելի յե յերեվակա-
մաւ, — պատասխանեց մայրը՝ բերկրալից դեմքով նայելով իր ազ-
միկներին :

Յերեխանները խովտացին և գլուխները ծածկեցին մոր փեշերի
մեջ, ինչպես արտույտները, վորոնք անհոգ ճիվում են ցորենի
հասկերի արանքում :

— Վո՞րքան լավ և ունենալ այսպիսի անուշիկ զավակներ, վա-
րանք ճովոզող թաշունների պես զբաղեցնում են մարդուն, — հայ-
տարարեց Յեղինիան և դեմքը փայլատակեց հուղմունքից :

— Ե՞ս, ժամանակները վատթարացել են, դժվար և պահել,
պվելի լավ և խելի չունենալ, — պատասխանեց լյուրան :

Սակայն նրա ժողովրդ աչքերն այդ հայտարարություն հակա-
ռակ միտքն եյին բավանդակում :

Մոտեցանք լուսամուտին : Դրսից չնկատվելու համար նուրբ
չյուղմած և թափանցիկ վարագույից եյինք նայում : Փողոցը ներ-
կայացնում եր խունափնթոր, դորչ պատկեր : Բազմաթիվ սայլեր,
փոշու ամպի մեջ, մեկը մյուսի յետեց դղրդալսվ անցնում եյին,
Վամանք բարձմած տնային իրերով, ուրիշների վրա կին ու յերե-
նա կոմ փոշեթաթախ պինդորներ :

Մի մեծ, հաղթական բանակի մնացորդն եր, վո՞ր ուազմի դաշ-
տից շպրտված, հողնարեկ, հուսալուկ առաջ եր չարժվում փրկու-
թյան կայսան զանելու . . .

Տիկին Լյուրան մեղ հյուրասիրեց նախաճաշով : նա շատ եր
ջիկին Լյուրան մեղ հյուրասիրեց նախաճաշով :

մտահոգված ամուսնու մասին, վորը անձնական գործերով մեկնել եր Տուապսէ: Տիկինը վախենում եր, վոր ճանապարհների խղումը յերկար տեսի. մենք հուսադրեցինք նրան և վերապարձանք մեր բո՞նակարանը: Իվան Մաթվեյիչը միջանցքում տախտակ եր տաշում ու հարթում:

— Մեր յերիտասարդ ընկերը ձեր աղջկան հայտանեց, — ասաց նրան Յեվգենիան:

— Հա՞ — պատասխանեց ծերունին սրբելով ճակատի քուտինքը, — շատ ուրախ եմ, բայց ավելի լավը իմ թոռներն են, իմ հըլ վլուն կաքալները:

— Իսկ ընկերները, վո՞նց ե, գալի՞ս են, — հարցրեց բարուշկան ջրաթաթախ ձեռները գողնոցով մաքրելով:

— Գալիս են, գալիս, բարուշկա, ուրախացի՞ր, — բացականչեց Յեվգենիան:

— Կդան ու ելի մեծ ու պղտիկ, աստված, յեկեղեցի չեն ճանաչի. համա ձեղ նման ջահել-ջուհուների խարջն են, հա՞... մըթմըթաց բարուշկան իր հին յերդը:

Մյուս որը դարձյալ տիկին Լյուբայի մոտն եյինք ու պատու հանից դիտում:

Այս անդամ ավելի խուճապային եր դարձել նահանջը: Ինչ վո՞յ շտապ ու հեքոտ բան եր նկատվում այդ հոկայական յերթի մեջ: Դեմքերն արևատ ու մութ, աչքերը սարսափի ու ցասումի լիճ, հազոււտները փոշեթաթախ, ճմլված: Զիերն անդամ հեռում եյի՞ ու սարսափով բռնված՝ կընկակոի արշավում: Սպիտակներն աշխատում եյին կուրան գետն անցնել ապահով թիկունք սաեղծելու համար:

Գնդապետ Շեշենկոն մի մոխրագույն, պառավ ձիւտ մեջի՞ն բլրացել, գտնվում եր հեծվորների շարքում: Զին ճոճվում եր այդ ճարպով լցված պարկի տակ, գլուխը թափահարում, կարծես զլանում եր տանել աշխարհիս համար ավելորդ դարձած՝ կոնակի ծանրությունը: Տիրոջ սաստ շեշտերին և մարակի հարվածներին պատասխանում եր ավելի դանդաղեցնելով քայլերը կենդանին չեր շտապում, խուճապի չեր մատնվել տիրոջ պես: Միծաղս չեյի կարողանում զսպել տեսնելով վասելի Պետրովիչին ճիռ սանձը թափահարելիս կամ սապողներով կենդանու կողերը ծեծելիս: Հիշ շղությանս մեջ պատկերվեց այն որը, յերբ նա գրասենյակում թիկնաթոռին բազմած, մատր սպառնագին թափ եր տալիս և առ

առաջ. «Ենթոք կաց հա՛, յերիտասարդ պարոն, թե չե՞... կամ ու աելեղենի խանութի ապակուց գայլի աչքերով ափսեյի մեջ դրված ինդուշկին նայելիս...»

Յերբ Յեվգենիային ցույց տվի գնդապետը (վորի մասին նախապես պատմել եյի), ուշադրությամբ նայեց և ծիծաղելով ասաց:

— Խոսք չկա, բավական չաղլիկ աղվես ե յեղել ձեր հին բառեկամը...

Գնդապետ Շեշենկոն անցավ ինչպես մի մռայլ տեսիլք:

Յեվգենիան մի պահ լուր դիտեց փողոցը, ապա մռայլից ու գողդով ձայնվ ասաց:

— Խե՞զ Զինա, գուր տեղ դոհ գնաց...

Նույն հարցն եր դաշույնի պես այդ վայրկյանին ցցվել ուղեղում: Ու գորշ տարածության մեջ, հեռու-հեռու մշուշում պատրամում: Ու գորշ տարածության մեջ, վառվուն, տենդոտ աչքերով, վորոնք կերպեց նիհար մի դեմք, վառվուն, տենդոտ աչքերով, վորոնք կապլացին, առկայօնցին ինչպես լուսեղեն ջահ, ապա ծածկվեցին մառախուղի մեջ ու մարեցին իսպառ...

Այսուհետեւ փողոցն իր ժխորով, ձիերի դոփյունով, սայլերի նորինչով դախճավ մի խառնախնթոր, խառնաշփոթ պատրամունող ճոխնչով գարճավ մի խառնախնթոր, իսպառ կամ կեր: Ու միզամած աչքերս այդ անորոշ ու անձեւ պատկերից զատ՝ փոչինչ չեյին տեսնում...

XI

Թնդանոթի խուռ թնդյուններն ինձ արթնացրին: Լուսածեպի փափառ շողերը վախվիսելով ներս ընկան ու պատուեցին սենյակի պատկանում:

Իվան Մաթվեյիչը մահճակալը ճոճունելով գլուխը բարձ-

րացրեց բարձից և ականջ զնելով թնդանոթի ճայներին՝ ասաց:

— Աչքդ լույս ընկերները հասել են արդեն քաղաքի դոներին...

Ու մի քանի անդամ շուր ու մուռ զալով անկողնում, սկսեց պատմել գեներալ կորնիլովի սիրագործությունները:

— Յերկու, թե յերեք տարի առաջ եր, վաղ առավատ: Զյունը պատակ եր չորս կողմ սպիտակ սալանի պես: ցուրտ եր, սառնամառատակ եր չորս կողմ սպիտակ սալանի պես: ցուրտ եր, սառնամառատակ եր չորս կողմ սպիտակ սալանի պես: ցուրտ եր, սառնամառատակ եր չորս կողմ սպիտակ սալանի պես: ցուրտ եր, սառնամառատակ եր չորս կողմ սպիտակ սալանի պես:

— Կամ կախվել: Քաղաքում տաք կոփ եր կորնիլովի ու բուլաներ եյին կախվել: Քաղաքում տաք կոփ եր կորնիլովի ու բուլաներ եյին կախվել: Մայր յեկեղեցու հրապարակում կարմիրների կարմիրների միջն: Մայր յեկեղեցու հրապարակում կարմիրների միջն հիմքից սաբսելով քաղաքի շնչքելը:

Կոբնիլովը պայման իր հավատարիմ մարդկանց հետ, ճանապարհին գողանվեց, ոիակը սայլիք վրա դրած բերին քաղաք: Մի տարի չափած սպիտակները քշեցին կարմիրներին, իսկ այժմ վերջիններին և՛ ըստմ առաջիններին... Աշխարհը մի չարի է, պտույտ և զալի մեկ այս, մեկ այն կողմ. ո՞վ գիտէ ինչ կլինի վաղը: Մեկն այսպես և փջում, մյուսն այնպես, ո՞ւմ հավատաս... .

— Մենք պետք եւ հավատանք նրան, ով պաշտպանում է արդարությունը, — խոսեցի յնս աշխուժ. թնդանոթներն ինձ թե եյլ ավել, արձակել լեզվիս կաշկանդված կապերը. — իսկ արդարությունը հարստահարվածի կողմն ե, նրա՛ կողմը, ով աշխատում ե, բայց իր աշխատածն տրիչն ե վայելում: Ով պաշտպանում է աշխատանքը և կրվում ամեն աեսակի չահագործման վեմ, նա՛ յիշմարիան ու արդարը:

— կավ եք խոսում, յերիտաշարդ պարոն, չատ գեղեցիկ ե
ձեր ծրադիբը, խոսք չունեմ։ Բայց մի՞նչև հնարավոր ե ազգի թու
փողին ու վաճառականին, աղային ու գրնապանին, գիտունին ու
ապետին հալմասարեցնել...

— Յերբ կառուցվեն սոցիալիտական կարգեր, ուր ամենքը հասարակության հավասար անդամներ դառնան, ամենքն հավասարապես աշխատանքն ու վայելին, յերբ գիտությունը, տեխնիկան, հոգը և ամեն-ամեն բան դառնաւ ընդհանուրի սեփականությունը, դայն ժամանակի միջնէ չի վեցանած ձեր մատնանշած խորությունը:

+ Ե՛ի, զուք ջահելենք, շատ շուտ եք վագեմորվաւմ, խռով
ու դորձի գեվարությանը մեկ և ձեզ համար. խոսքով շատ հեշտ է
այլ ծրագիրն իրագործելը: Տեսնենք, վո՞նց պիտի հավասարեց-
նեց մասինինու ու կոմիսարին. թող մուժիկն ել կոմիսարի պես ափ-
տոմաբիլ նաևի, այն ժամանակ կատարյալ կլինի հավասարությու-
նը, խե՛, խե՛, խե՛...

Կարիք չկար շարտահակել վեճը ի վան Մաթվեյի չի հետ : Մի՞թե
կարելի յեր ժայռի պես ամբացած նրա պակեղաւմ նոր մտքեր ու գոտ
զափարներ ցանել : Թող կյանքն ինքը փոփոխություն առաջ բերՔ
նու ժե՞ն . Եթե կարդ ե :

Էռուշը ավագ ժամանակ ինձ, սրա լուս, զվարթողին հայոց-
քը կարծես ասում եմ.

«Եսո՞ւմ եք վորատներն ու թնդյանները, ձեր վրկության ժամանակ մաս ե»...

Տիկին Այսուբայի պատուհանից նայում ենք : Փողոցում վաշտ
ամպ է, անասունների փեյին, մայթերի յեղերքում աղբակեցներ,
փալառի կտորներ ջարդված կահկարասիք, այս ու այն կողմ թա-
վալված սայլերի անիմսներն ու ուռիններն են իրենց անշարժությու-
նը փաղբաւմ :

Ամայի ու զորչ կերպարանք ունի փողոցը, խայտը և լուս, ուստի աչքերով: Խնչ զոր աներենույթ բան սարսափով բոլոված պատում է աներեվույթ մեկի... Հեռուներից թնդանութներն են գտում կամ զնդացիրները մահասփյառ տկալում՝ բոլոր սրտերամ սառակամ զցելով: Աշխարհը դարձել է թնդյունների ու զորառների խայտաբղետ խառնուրդ: Տների պատուհանները փակ են, զոնները նիզերով ամրացրած: Քաղաքացիք սրտատրով հնանում են գեղեցիկ ընթացքներ: Ամեն մի ապակու յիտե մի սիրո և բարախում ուրտխությամբ արքշիր կամ հեծում պարտության ցավից: Ո՞վ դիտե, քանի մայր ալմոր կամ քանի-քանի ջահել հարս փախչող սիրելիներին են սկում, կամ քանիսը դրկաբաց ու ցնծագին սպասում քաղաքը գրավողներին: Վորքա՞ն թույն ու մաղձ կտ հավաք և խուս, անողոք պայքար:

Յերեմին հատ ու կենտ կամ խմբովին ձիավորսոր առ պատմաթաթախու, մոտայլ դեմքերով; Մի քանի հետեւակ զինվորներ զուգուածով ու հայշոյելով, վոմանք հրացանները ձեռներին պատրաստ պահած, վոմանք եւ թրերը, կիովեցին զեմացի ոռած առաջ:

— На здоровье, — *բացականչեց* րդու և առաջ մեջ հետապնդություն կր փողօքի անցուզարձը:

— Մարդիկ կոնծաբանելով, քեզ անելով են թուա՞քաղաքը, ինչ դարդ ունեն վոր, — ասաց տիկին Լյուբան ծիծաղելով:

Մի քանի հարբած զինվորներ վուների վրա ճոճվելով մոտեցան մի ուրիշ խանութի, ըսրիկալով չարդելով մեծ ապակին ներս խոժեցին և գուրս բերելով մանուֆակտուրայի մեծ ու փոքր կապցներ՝ թափեցին վոլոց:

Վաճառական Մուխրանսկու խանութն է. հիմա տերն ով դիտե ծովի վրա՞ յեւ, թե արդեն հասել ե կ. Պոլիս, — ասաց Յեղանիա Գետրովնան, վորի գեղաշեն մարմինը ինձ հետ կողք-կողքի հենվել եր բուսամուտի գողին:

Հեռվից լավեց հրացանների ճարճատյուն: Հարբած զինվորները դուրս թուան խանութից և վախովրած աչքերով մի պահ նայեցին փողոցի յերկայնքն ի վայր, ապա ձեռքի կապոցները շպրելով փախան: Մնաց միայն նրանցից մեկը, հաղթահասակ, խոշոր փափախով, գեմքը գիտուց կաս-կարմիր, աչքերը կայծկլտուն, մերկացրած թուրը ձեռքին ողի մեջ չողացնելով, վորոտալի ձայնով կանչեց.

— Կիսիեմ, յես իմ աստված, ջարդ ու փշուր կանեմ բոլորին, ապղ-սաղ կուտեմ...

Թրի բութ կողմով մի քանի անդամ ուժվարեն Հարվածեց փակ խանութների յերկաթյա ճաղերը և ստորին հարկի պատուհանների թիթեղյա յեղերն ու, վուները լայն, լայն դժելով, աժդակա-աժդահա առաջ անցավ:

— Ես ձեր հոգին... սաղ-սաղ կմորթեմ, թող անիծյալ լինեմ յեթե բոլորին չջախջախեմ...

Ապա սկսեց յերգել, կարծես մի ամբողջ խումբ եր յերգում, այնքան բամբ և ուժեղ եր հնչում ձայնը:

Մի պահ լոեց, ողի մեջ փայլատակեց սուրը և շրիկալեն ներքեցից դռան ճակատին կախված լապտերը: Բարձրաձայն հոհուց և բավանդակ ուժով գոռաց.

— Համուն դաղափարի...

Այդ վայրկյանին կայծակի պես անցան սալիստակների վերջաղաղահներից յետ մնացած մի քանի ծիափոր. նրանցից մեկը ձեռւ ընթացքը դանդաղեցրեց և կանչեց հարբած զինվորին.

— Հեյ, արջի քթով, ինչ ունիս բաց թողել սարսաղ-սարսաղ գուրս ևս տալիս, հրեն «ընկերները» դալիս են, փախի՛ր...

Ծեր առաջ հարփածելով նժույդի կողքերը նորից առաջ սրացավ:

— Ոե՞, խե՞, խե՞...

Լովեց մի խուլ, արհամարհական քրքիջ:

— Ե՞ս դուք, վախկոտ մկներ, փախչում եք, հա՞, տղամարդու արյուն չունեք, խե՞, խե՞, — գոռաց հարբած զինվորը և արագորեն առաջ գնալով մի պահ անհետացավ մեր աշքիցը: Փողոցը մնաց ամայի, ինչ-վոր ահավոր անակնկալի սպասում: Քիչ հետո կրկին թնագաց նույն զինվորի ձայնը և նրա հաղթ մարմինը նորից բլրացավ մայթի վրա:

— Կկոտորեմ, աստված վկա, թող բոլորը մեկից դան, յեթ սիրտ ունեն...

Յեզ ի հաստատություն իր սպառնակիքի՝ թուրն ուժգնորեն խիեց մի մեծ դռան կամարակաղ քարին՝ կայծեր արձակելով:

Փողոցի ծայրից լովեց հրացանային համաղարկ, հարբած զինվորը կարծես ուշքի յեկալ, թուրը պատրաստ, փախախն իջեցրեց աշքերի վրա, ճոճվելով յեկալ կանգնեց փողոցի մեջ տեղ և դռուց.

— Ե՞ս, դուք շանվորդիներ, կարծեցիք, թե վախենում եմ, հա՞... հանուն դաղափարի...

Բայց խոսքը կիսատ մնաց, հրացանները ճարճատեցին խիստ մոտ. զինվորի ձեռքից թուրը թուրվ և ընկավ փոշիների մեջ, իսկ տերը, զարնված թուզունի պես թեերը թափահարեց, գողդողաց, մթ քանի մոլորուն քայլ նետեց և գլորվեց զետին, կարծես մի անեւ բեկույթ ձեռք նրան ներքև քաշեց ուժով:

— Ո՛հ, սպանեցին խեղձին, — հառաչեց տիկին Լյուբան:

Սարսափելի նույնպիսի ձիչ արձակեց նաև կողքին կանգնուն Յեղենիան:

— А что же одним дураком меньше стало на свете (ինչ արած, աշխարհից մի հիմար ել պակասեց), — հայտարարեց իվան Մաթվեյիչը սաւնարյուն:

Փողոցը թնդաց ձիերի քառասմբակ դոփյունով: Մի հարյուրակ հեծելագոր, համաշափ յերթով, հրացանները պատրաստ, մըրկի պես անցավ, ձիերն ել վես ու կայտառ, հաղթության և ուժի գիտակցությամբ տողորված:

— Կարմիրներն եյին, արդեն զրավում են քաղաքը, բացանչեց Յեղենիան վողերպաված:

Մերսունին խորհրդավոր արտահատություն տայտի գեմքի առաջ:

— Սա շախմատի խաղ ե, եսոր սրանք են տանում, եպսց նը-
ռահնք, ով ինչ իմանա... .

— Սա վոչ թե շախմատի խաղ ե, — հարկածառեցի յես աշ-
խույժ, — այլ դասակարդային կոիվ կհաղթի ա՛յն ռատակարդը,
վոր ուժեղ ե...

XIII

Հակառակ Իվան Մաթվեյիչի հայրական խրաներին՝ Յեղ-
անիւայի հետ գուրս յեկանք փողոց :

Մի խումբ բանվորներ ապրանքատար ովառոմորիլի մեջ, թաշ-
կինակները շարժելով, ցնծագին ձայներով անցան :

Ոզուտուի արեւը խումբնել եր քաւաքի վրա, այրում նրան իր
բարեկ չողերով: Կառւրների թիթեղներից մեզ վրա յեր հոսում
դաղ, խեղիչ դոլ:

Փողոցի մեջուղում «Հանուն գաղափարի» ընկած զինվորի
պիակը ձիերի սմբակների տակ տրորվել եր, խոշտանդվել ու դար-
ձել ցնցոտիների մի խղճուկ կույտ...

Հրացաններով զինված մի քանի բանվորներ գեղի մեզ եյթն
դալիս: Նրանց մեջ ճանաչեցինք զբաշար իլյուշկինին: ուրախու-
թյան ժամաներով ընդառաջեցինք իրար, ճնոները թոթվելով
չնորհավորեցինք:

— Վերջապես, յերկար սպասեցինք ու տանջվեցինք մինչև
փար կատարվեց... ասաց իլյուշկինը հանդիսավոր դիմքով:

Իմ ժտքում ցցից անխուսափելի հարցը— արդյոք իլյուշկինը
Զինայի մասին վորևե տեղեկություն չունի՞ :

Ասդյոք մեր Զինայից լուր չունե՞ք, — հարցրեց Յեվգենիան
կտնիւելով ինձ:

— Վաս մի, բանուի գոները բացվել են ու բոլոր բանատակյալ-
ներն արձակվել, բայց Զինան չկա...

Իլյուշկինի պատասխանը բոլորին վրա սառն ջուր ժաղեց: Ինձ
համար գոնեն կիսով չափ պակսեց այն մեծ ցնծությունը, վորով
արբել եյինք Հազթանակի այդ նշանակալից որը...

Ամերի Հազթանակը պիստի օտոնվի առանց Զինայիք... մը-
տածում եյի և աչքերս լցում եյին արբության ցողով, նույն-
պիսի ժոազ ժոտքեր պաշարել եյին Յեվգենիային, վորովհետեւի
նրա դեմքը մշուշվել եր ամպամած յերկնքի պես:

Քաղաքի կենտրոնական հրապարակիդ կարմիրների յերկու

թնդանոթ ոկտեցին վորոտալ, թնդացնելով ամբողջ շրջակայքը:
Գնդակները Փչալին անցնում եյին մեր գլուխների վրայով, դառն
հարվածելու գետից այն կողմը ամբացած հակառակորդի
դիրքերը:

— Լավ վոր ձեզ չեն ձերբակալել, — ասացի յես իլյուշկինին:

— Գոլմանի հետ այսպիսի ծակն եյինք մտել, վոր պատասխան
անդամ կդժվարանար դանել մեղ, — պատասխանեց իլյուշկինը
ժակտալով: մենք թաղնվել եյինք մոտակա Պաշկովիկա զյուզում
մի զյուղացու ախոռի վրա շինված հարդանոցում, վորտեղ հար-
մար թաղստարան եյինք սարքել. վտանգի դեպքում պիտի պահ-
վեյիք իստի դեղի մեջ կամ պլվեյինք հարդի ճյուղերով: Յերկար
ապրեցինք այսաեղ. մարզու յերես չեյինք տեսնում, պառակ
տանսիրուհուց բացի, վոր մեզ համար տեղեկութուն կամ ու-
տելիք եր բերում. հավերն եյին միայն այնտեղ կչկչում կամ գի-
շերը գալիս մեր կշտին թառում...

Ցես ել իմ հերթին պատմեցի, թե ինչպես Յեվգենիայի ող-
նությամբ պահվեցի կիպկալովի բնակարանում, թե ինչպես Իվան
Մաթվեյիչը իր փայտարանում ինձ համար համոց-թաղստարան
եր պատրաստել...

— Մի խուսքով, ամեն մեկս մի հարմար ծակ եցինք դառել ու
համի պես թառել, — յեղափակեց իլյուշկինը ծիծաղելով:

— Միայն մեր Զինան չկարողացավ թագնվել, ընկավ թե-
նամու ճանկը, — տիրությամբ հառաչեց Յեվգենիան:

Յերկնքում սև բղեղի պես պատույներ գործեց հակառակորդի
հետախույզ ողանավը: Նրան հարվածելու համար ճարճառեցին
բազմաթիվ հրացաններ: Ուղանավը թեսաբախ թոշունի պես ճախ-
րեց և անհետացավ, լուծվելով կապույտի մեջ:

— Բան գուրս չի գա, ինչքան ուրիս են թող բզզան, նրանց
յերգն յերգվեց արգեն, — հայտարարեց բանվորներից մեկը ար-
համարհական շեշտով:

Առաջ անցանք: Իլյուշկինը քայլում եր հակառակ զինվորի
պես, արևահար ու կոշտացած զեմքը հղարա ու վեհ. մաշված
բաճկոնակի վրա նշմարվում եյին փոքրիկ պատովածքեր, վո-
րոնք, յերեվի, հարդի ու խոտի շատկերից եյին գոյացել:

Նորանոր բանվորական խմբեր եյին ընդառաջօսմ մեղ: արտք
ձայներով ու այն տեղից կանչում եյին իրար.

— Здоровье, Վասկա, դեռ գյուլլի կեր չե՞ս դառնել:
 — Դեռ եղ պատվին չեմ արժանացել:
 — Վո՞րտեղից եք գալիս:
 — Սպիտակներին քշելուց:
 — Ի՞նչ են շինուած մերոնք:
 — Կուբանի յեղերքն են ամրանում, վաղը կանցնենք գետը և
 պատավարժան բուժույներին կը չենք մինչեւ Ան ծովը:
 — Հետո մինչեւ ջհանդամը...
 — Բոկ քաղաքում ի՞նչ են շինում:
 — Կարմիր բանակի համար հարմար չենքեր են պատրաստում:
 Քաղաքի ապահովության և կարդապահության մասին են հոգում:
 — Ո՞ւր և Գոլմանը:
 — Գոլմանը նշանակված է հեղիոմի նախադահ:
 — Հեղիոմի նախադահ, — հարցրեց Յելզենիան զարմա-
 ցած, — բավական խոչը տեղ և ընկել մեր Եմիլը:
 — Բաս ի՞նչ, խելոք մարդ ե, արժի, — պատասխանեց Խլուշ-
 կինը ինքնավատահ:

Առաջ անցանք: Քաղաքային ինքնավարության չենքի առաջ,
 նոտարանի վրա ուղիղ դիրքով նստել մի մարդ, չուծ աչքերով
 ժեղ եր նայում: Գլխարկը թեքվել եր ու ապատանել նստարանի
 թիկունքին: Ձեռները, վտիտ ու գորշ, անշարժացել եյին ծնկնե-
 րին. դեմքը սպազմել եր, զունատվել ցրտահար տերեկի պես. ա-
 կանջի ու քնի ծայրերը մոմի պես հալվել եյին: Կարծես մի ինչ
 վոր անլուծելի առեղծված եր ցցվել նրա ուղեղում և դարձել
 նրան համբառորեն քարացած սՓինքս...

Մի կորաքամակ ծերուել տնքանքալով յեկավ և առանց նա-
 յելու արձանացած մարդուն, բազմեց կողքին, չոյեց ալեմազ
 ֆորուքը, ծխամործը վառեց և սկսեց անհաղորեն ծխել:

Սպիտակ գլխաչորով Ֆի պառավ կին անցնում եր փողոցով և
 որպան-նրան կանգնեցնելով հրացնում.

— Յեղբայր, աստծու սիրուն, մի ասեք, իմ Ստյոպայից լուր
 չունե՞ք:

— Ո՞վ և Ստյոպան, չենք ճանաչում:
 — Վա՛, իմ տղեն, մի ջահել, թոսուն տղտ, վոր դեպոյումն
 եր բանում, մի՞թե չեք ճանանչում:

— Վո՞նց ճանաչենք, բարուշկա, Ստյոպա շատ կա յերկրիս
 իերեսին:

Գիշերս թվանքը վերցրնց գնաց ու մինչեւ հիմի չի յեկել:
 — Կդա, բարուշկա, մի մտածի, վորտեղ վոր և կդա, հուսա-
 գրում եյին անցորդները:

Բայց պառավը չեր հանգստանում, ախ ու վախ քաշելով,
 ձեռներն իրար կցած, պատահած մարդուն հարցնելով շարունա-
 կում եր ճամբան:

Փողոցի անկրունում մեր դեռ յելավ փոշեթաթախ, պատա-
 ռոտուն շորերով մի մարդ, դեղնալուն աչքերը մի պահ հառեց
 ինձ ու մոտ գալով սրտագին բարեկց: Սակայն յես չեյի մտարե-
 րում նրան:

— Զե՞ք հիշում, ներկարար Վասիլենկոն եմ. յերբ ինձ բերին
 պահնորդական բախնի կալանատուն, դուք այստեղ եյիք. շատ
 վրդովված եյի, բայց Զուբովը, թող աստված նրա բանն աջողի,
 բավական քաջալերց ու սրտապնդց ինձ...

Կալանատունն իսկույն պատկերվեց առաջս ինչպես մի մըղ-
 ձավանջային, անջնջելի տեսիլ: Ականջիս հնչեց ներս հրփուզ Վա-
 սիլենկոյի աղիողորմ կանչը.

«Յեղբայրնե՞ր, խղճացեք ինձ, անմեղ եմ»...

Նրան փոխադրել եյին կենտրոնական բանտ և առավոտյան
 փախել եր այստեղից:

— Գիշերս լսեցինք հրացանի ձայներ, — նկարագրեց Վասի-
 լենկոն իր ազատագրումը, — կարծեցինք, վոր բանտարկյալներին
 տանում են գնդակահարելու: Գիշերն անքուն լուսացրինք, ահ ու
 դողով: Վաղ առավոտյան մեր ականջին հասան թնդանոթի խուլ
 ձայներ: Տղերքը վափացին իրար մեջ, ուրախացան: Վորոշեցինք
 լուսամուտից նայել. մի քանիսը հենարան դարձան, իսկ յես,
 վորպես բարձրահասակ մարդ, բարձրացա նրանց կոներին և կտ-
 ժացուկ դուրս նայեցի. վախից քիչ մնաց սիրտո ճաքեր, վորով-
 հետեւ պահակները կարող եյին նկատել և գնդակահարել: Սա-
 կայն, զու մի ասիլ, վոչ վոք չկար դուրսը, վոչ մի պահակ...
 Իսկ թնդանոթի ձայները մոտենում եյին, հա մոտենում: Ներքե-
 թուա և պատմեցի մերոնց. վո՞նց ուրախացան և սկսեցին պար-
 զալ, հարեան կամերայի տղերքն ել յերգում եյին: Քիչ հետո
 բարձր ձայնով կանչեցին բակում. «տղե՞րք, ով ուղում ե, թող
 փախչի»: Ո՞վ չեր ուղում փախչել վոր, ո՞վ կուպենար մնալ նդ
 սատանի վորջում: Գաղաղած զուրս թունք մեր բներից և վազե-
 ցինք դեպի դուռը: Սակայն դրսի մեծ դուռը պինդ փակված եր.

դեռ ընկտնք՝ դեն, չկարողացանք քանիդել ամբակուս կողմէքը։ Վորոշեցինք պատը ծակել։ այդ ավելի հեշտ եր, քան յերկաթն զուսը բաց անելը։ Յերկու ժամվա ծանր չարչարանքից հնոտ, հաօտ, ամուր պատը ծակեցինք և մենք իրար յետեզից դուքս դալով մի խուլ փողոց ցրվեցինք ամեն մեկս իր իմացած տեղը։ Լավ ասնջվեցի այդ գերեզմանատանը, խոսք չկա, խկ հիմի, ինչողեւ տեսնում եք, կանդնել արեկ տակ տաքանում եմ և անինում անցած որերը։

Յերբ պատմեցի Զուրովի ինչ տեսակ ժորդ մնելը, նրա աշխերը զարմանքից խոչորցան։

— Ի՞նչ եք ասում, — բացականչեց իրստ ուրղովված ։ Ե՛խ, սուսանի ճուտ, յես նրա... Հըմ, վորքան դժվար և ճանաչել մարդկանց. իսկ նա այնպես սրտացավ եր, այնպես կարեկից, թվում եր, թե ամանապնիվ և ամենահավատարիմ մարդն և աշխարհում, վորին կարելի յե հավատալ և անկեղծորեն նվիրվել, և անձնելով հոգու բոլոր բանալիները։ Ա՛խ, յիթե վորեւ տեղ հանդիպեմ նրան։

XIV

Սշերիդ չես հավատում, յերբ նայում ես վաղոցները թափած այս ծով ամբոխին։ Մայթերը դողում են մարդկանց քայլերից։ Ասեղ զցելու տեղ չկա:

Վորքան մեծ տարբերություն մի քանի որ առաջվա և այսոք քաղաքացիների միջև։ Նրանք թանգարժենք հաղուստեղեն եյին հաղնում, սպիտակ ոճիք կրում կամ վոսկեթել ուսուցներ։ Այսոք բոլորպին հակապատկերն ե, կարծեն նախկին քաղաքն իր բնակիներով չքացել և և նորն և յեկել, նոր մարդեկ հասարակ շորերով, բամկոն ու բուզ հաղած, անսեթեեթ ու անբասիր։

Լուսամուտները բաց են և պատշզամբները հանդիսատեսներով ի։ Կոտորներին անդամ խթառում են մարդիկ, հորձանքում արեկ ճաճանչների տակ։

Փողոցում անցնում եր կարմիր բանակի հետեւակ զորքը։ Մաշված հագուստներով, ջանել ու կայտառ զինվորները քայլում են համաշտի և ժպտալից գեմքերով ընդունում անթիվ վողջույններ, թնդության ու բերկանքի բաղմազան աղաղակներ։

Զդիտեն, վո՞րն և հրամանատարը, վո՞րը հասարակ զինվոր։ Հազարամեր միատեսակ են, ու վորեւ նշան չկա, վոր իրարից

տարրերի։ Պողպատյա մի կամք և իշխում բոլորի մեջ, հնարաւար մեռնելու անվկանու կամք, վոր գերել և բոլորին, շարժում առաջ, մղում մարտնչում ից-մարտնչում, հաղթանակից-հաղթանակ։

Լովում ե ուռաների ողբացնող հնչուն, բաղմահաղար կըրծքերից հյուսվող վիթխարի կանչ, վոր թնդացնում և փողոցն, ամբողջ հոսում հոգուում մեջ ու վողջ երթիւնու լարում, մաղնիում։ Վորոտում ե անցնող զորքի հուժկու յերգը՝ հուժկու կըրծքերից, վորի յուրաքանչյուր թրթիու հզոր շեշտ ունի, անսովոր ուժգին թափ։

Թնդում են սրտերը։ Յերգի հնչյունները փոթորկված ծովի ալիքների պես մոնչում են, խուժում բոլորի հոգիները, ձգում, միացնում իրար, անխորտակ շղթայով շաղկապում...

XV

Յելգենիա Գետըովնայի հետ դուրս ենք, շրջում ենք վաղոցները, դիտում կարմիրների հաղթական յերթը, ամիսոսում, վոր այդ բոլորը կտարփում և առանց Զինայի։

Բայց Զինայի մասին վոչ վոք վոչինչ չգիտու և Յելգենիայի հետ վորոշեցինք զնալ Վառվառա նիկոլանայի մոտ մի վորեւ տեղեկություն իմանալու։

Վառվառա նիկոլանան մեզ ընդունեց շատ սիրալիք, հրավիրեց ներս և ծանոթացրեց վորդիներին, վորոնք վերադերձել եյին կարմիրների հետ։

Նրանք թեյում եյին և մեզ հրավիրեցին մասնակցել իրենց աղքատիկ սեղանին։

Զինայի՝ մասին Վառվառա նիկոլանան վոչինչ չեր լսել և շատ տիրեց, յերբ իմացավ, վոր մենք ել վոչինչ չգիտենք։

Մի պահ սարսուալի լուրիւն աիրեց ու չելինք իմանում ինչպես սկսենք խոսակցությունը և ինչի մասին խոսենք։ Վարվառա նիկոլանան ձեռները կցեց իրար, մոայլ ստվեր գարձակ ու քարացավ տեղուստեղը, վերջալույսի պես մարմբոզ նրա փոքրիկ աչքերի անկյունում պապղացին արտասուքի կաթիներ, վորոնք չեյին ցամաքում յերկար ժամանակ։

Վորդիները՝ Վարդիան սպասարկում եյին մեզ ու միաժամանակ մասնակցում սեղանին։ Յերկուսն ել առողջակազմ ու կենսուրախ աղաներ եյին, փոչեթաթախ սաղողները վուսնե-

բին: Ծանր ու ճնշող լոռությունը խզեցին նրանք՝ պատմելով հետաքրքրագիր նորություններ իրենց կյանքից և ուղմածակատի դեպքերից:

Միշան գտնվում եր հետեւակ վաշոռով , վոր արյունալի կը-
ովիլներից հետո հանդստանում եր , իսկ Վալորիսն կրտսեր հրամ-
կագմից եր և վաղն և յեխթ պիտի մեկներ ուղղմածակատ :

Յերբ այստեղից հեռացանք, ճանալարհին Յեղինիային
ինգրեցի մտնել իմ սենյակը տեսնելու ինչ դրության մեջ ե:

— Ուզում եք նորից վերադառնալ ձեր սենյակը, — հարցրեց
Յևգենիան հետևելով ինձ :

— Բաս ինչ, բավական չե՞ք համարում ձեզ պատճառածս նեղությունը:

— Յես կարծում եմ մեզ մոտ ավելի հարմար ե և ուրախ ձեզ
համար, յեթե միայն չեք ճանձրագել:

— Ամենեվին, յես շատ յերախտազարտ եմ ձեզ և վոչ մի տեղ այնպես հանդիսաւ և ուրախ չեմի դդա ինձ, փորքան ձեզ մոտ...

Իմ խոսքերն ուրախացրին Յեղինիային և նրա լուսապայծառաչքերը խիստ ազդուի ու ժակիսով առլի՝ մի պահ կենտրոնացրեց ինձ վրա :

Նյուռան ուրբախ ճիշով գլմակլորեց ինձ և պատմեց, թե ինչ-
պես իմ բացակայությանը սենյակումս ապրել են մի քանի զինվո-
րականներ, անիմառ դործածել ու ջաբուկ իրերս և ապա փախել
սպիտակների հետ :

Հիրավի սենյակո դառել եր մի քանդված, ավերած բռւյն, մահճակալո ջարդոտել Եյխն, ըորես պատառոտել ու մեծ մասթաւանել...»

Այդ ավելածությունը մնջող տպավորություն գործեց ինք
վրա, մինչ Յեկանիային, չդիտեմ ինչու, ուրախացրեց:

— Այդ արողները յերկեխ նախազգում ելին, վոր սենյակի տեղը ավելի լավ բնակավայր ու հարմարություններ և գտել իրեն համար, — առաջ Յեղենիսան ժպառալով:

Նյուոան խեթ-խեթ նայեց նրան, վոտից դլուխ չափեց և հարմար առիթ գտնելով կամացուկ հարցրեց ինձ։

— Դա քո կի՞նն ե...
— Այս՝ ատտախանեակ մես ակամա, առանո իմանաւու.

Նյուռան շինթվեց, քաթանի պես գունատվեց դեմքը և նորից աեթ-իւթ նայեց Յեղանիայնի:

Հետո ել վրչին չասաց, չհետաքրքրվեց թե ի՞նչպես եմ վար-
վելու սենյակիս և իրերիս հետ. և յերբ բաժանվեցինք նրանից,
առա սառն ընդունեց բարեւ և գեղո՞ն դեմքով հեռացայ. . .

Նյուոայի վարմունքը ծանր ստվավորություն գործեց ինձ վրա
և հանցանք դործած մաղու նման՝ քայլում ելի լուր ու դվիսիկոր:

— Ո՞վ եր այդ կինը, — հետաքրքրվեց Յեղենիան ճանապարհին :

Յերկու խոսքով՝ պատմեցի Նյուռայի ով լինելը, շեշտելով,
վոր նա ահադին լավություններ և արել ու վերջին անգամ փրկել
և ինձ մահից :

— Փրկել և մահից և դուք այդ առթիվ շնորհակալություն
չհայտնեցի՞ք նրան, — բացականչեց Յեղիբենիան և նրա գեմքն ամ-
փովիեց ու լրջացավ:

— Յես այդ կհայտնեմ հետո, յերբ նորից գնամ այնուեղ, --
պատասխանեցի յես հանցանքի մեջ բռնված մարդու պես շփոթ-
ված :

Փողոցամ աղմուկ եր, զորք եր անցնում թնդանոթներով ու
պաշարակիր սայլերով: Խսկ մենք քայլում եյինք, ամեն մեկս ընկղ-
մված եր խոհերի մեջ:

Յերբ Յելդենիան իր սենյակի դռուը բաց արավ և մհնք ներս
մտանք, մի նոր բան վերհիշողի պես մոտ յեկավ և հարցըրեց.

— Իսկ ի՞նչ վախաց այդ կինը ձեր ականջին, արդյոք իմ
մասին բա՞ն հարցրեց :

— Հարցը եց, թէ դուք իմ կի՞նն եք...

— Իսկ դուք ի՞նչ պատասխանեցիք
Պատասխան կատարելու համար առաջ է գալիք

— զատասխանեցի, վոր իս զիրու ոք.
— եհ՛ եհ՛ եհ՛ — մամուռ ոռչպա

— սա , լու , լու . — Արաք Գևորգ Յանձնի առ Հովհաննելու մասին ստուգական պատմելու սույն ընդունակություն ունեք :

— Բայց յեթե հեքյաթը վաղն իրականություն դառնա՞...

Ցեղանիսի զեմքը Ալշացավ և սր վարկյան նրա աչքերը քըն-
նեցին լոնձ, կարծես ուզեցին ստուգել խոսքերիս անկեղծությունը,
ապա նրանք բյուր դուլքերով շողջողացին սիրով ու յերջանկու-
թամբ լցված...





ԳՐԱ 75 ԿԱՊ. (9 և.)



ЦЕРУН ТОРГОМЯН
В ВОДОВОРОТЕ

Госиздат ССР Армении
Эреванъ 1831

ՀՀ Ազգային գրադարան



NL0342042

31660